

51 JAN 2008 18 NOV 2011
May. W. - 1

891.99
9-23 *այ*

Լ. ԳԱԼՅԱՅԵԱՆ

ՃԻՐԻՄՆԵՐԻ

ԿՂԶԻՆ...

96988



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Ելեբոր. տպարան «Հ Պ Օ Ւ Ա», Մոռելյանի № 8.
1913

Քեզ, որիդ հետը կեանքը երազ է, երակը կեանք...
Դու մի ծաղիկ ես, որին հիւսել են լուսնի, նրա այն
վշտի դեղին շողերը, աստղերի ցոլքը, հողմի բումունքը...
Քեզ որոնել եմ երազնվ, տանջանքնվ, ինչպէս մի թիթեռ,
որին յափշտակում է թփերի տակ աճող ծաղկի բուրմունքը,
որին այդ որոնումի մէջ էլ այրում է արևի բոցը...
Քեզ հանգիպեցի շամանդաղին, երբ հոգուս իջել էր մայր-
իջնող արևի փրփուրից վշտի վարդագոյն մառախուղ, որի մի-
ջից հանգչում էին ու կրկին ցոլում հեռու յոյզերին, սպասելիք-
ների այնքան գողարիկ աստղերը...

Ու՝ սկսեցի խոյանալ դէպի քեզ, բայց երբէք չը հասնելու հաւատով, իմ իղձերից, կանթեղի շողքերից հիւսած իմ ցնորը... Քեզ, որ նոյն կանթեղի մէջ, լոյսի խաղի պէս՝ կարծես գորութիւն չունիս...

Սպրում եմ համբոյրիդ ցնորեռվով... Եթք գու հեռանում ես,
«Ես մեռնում եմ» ինչպէս այն ծաղիկը որ ապրում է արևի ցոլ-
քով... մարում է երեկոյան շողերի տակ... եւ զարթնում այն
ժամին, երբ նրա համբոյրը ուշքի բերելով ամեն մի ծաղկի՝
ապրել է ստիպում այնպիսի փափառով...

ԵՐԵ ՊՈՅ ՀԵՊՈՅ ԵԱ, ԵԱ ՄԵՊՈՎԾ ԵՄ:

Ապրում եմ քո ծիծառի զնորդով։

Առանց քեզ չկարող է լինել այս պահը, ոչ ոք չկարող է լինել այս պահը, ոչ ոք չկարող է լինել այս պահը... Այս պահը պահանջում է սահմանափակություն և անօգտականություն:

Բո գոյներից, քո շողբերից ևմ հիւսում իմ ցնորթը, քո դժույն, խաղաղ հայացքից՝ իմ տանջանքը...

Առանցքեղ չեմ կարող ապրել...

Հոգիս լուսին էր, որ չունէր ոչ լոյս, ոչ ջերմութիւն և ոչ էլ կամք...

Որ թափառում էր մենակ, չը հասկանալով իր գոյրութեան
իմաստը:

Եւ հանդիպեցի քեզ տանջանքիս այն մեծ ճանապարհն... Դու քաշեցիր ինձ մագնիսի ուժով։ Եւ այդ օրից թափառնմ եմ քո շուրջ, քեզ հասնելու, քեզ որսալու տանջանքով։ Դու ես իմ արևը...»

Թո փաղաքանքի տակ է, որ սրտիս մէջ, այն խուլ անպատում, ուր մոխիր էր դառել յոյսի ամեն մի շիւղ, քո փաղաքանքի տակ էր, երբ սկսեցին բացւել գոյներիդ խաղով այնքան ծաղիկներ... որոնք այժմ փունջ կաղմած՝ աճում են, քեզնից գոյն, բուրմունք առնելով...»

Եթբ քեզ տեսել եմ զլխիկոր, հեռուն նայելիս՝ ես յիշել եմ այն ծաղիկը, որ երազում է լուս, մենակ՝ լուսնի գուրք գուրանքների տակ...»



ՇԻՐԻՄՆԵՐԻ ԿՂԶԻՆ...

Վաղուց, մօր գերեզմանի վրայ արցունք թափելու տարագիր որդու կարօտով՝ փափագում էի Ասի ուխտի երթալ... տեսնել մեր նախնիքների՝ այդ բարձունքներում ճախրող արծիւների՝ նրանց փառքի, գործերի այն հսկայ շրիմը... որ իր միջ թաղած սքանչելի բեկորներով մինչև այսօր էլ հիացնում է մեզ, այդ հսկաների թղուկ ժառանգներիս...»

Եւ հպարտ իմ արարքով՝ ի՞նձ, ինչպէս ջերմ հաւատով իր ուխտին դիմողի՝ համակել էր իուլ բերկրանքի հետ, նաև հաճելի մի վեշտ...»

Քառորդ ժամէր, ինչ զնացքը թողել էր կայարանը, կանգնած պատուհանի առաջ՝ ես դիտում էի շրջակայթի այն չքնաղ տեսարանները, որ սփոռում էր առաջիս տմարային գիշերը...»

Ահա շրջապատող լեռների ընդարձակ փէշերքին, հսկայ ձորի մէջ, իբրև աստղավառ երկինը՝ տարածվում է թիֆլիզը, կովկասի այդ սիրուն մայրաքաղաքը, որի ուրախ, աղմկալի կենդանութիւնը այլևս չի համում ականջիս...»

Ահա Մամա-Դաւիթի շքեղ, վիթխարի բարձունքը— թիֆլիզեցի այդ պճառակը տիկինը, որ ճակատին մի խոշոր գոհար, փարթամ կրծքին լուսավառ կոճակներ՝ բազմել է իր գահոյքին...»

Ահա Օթթաճալի, սաղարթախիտ, հարուստ շրջակայքը, շրջակայ սարերի այդ բուրալից փունջը, որոնց միջից թարթելով իր թաղմաթիւ վառվուն աչքերը,

լուռ ակնարկներով, ինչպէս արևելքի կրքոտ գեղեց-
կուհի՝ ժպտում է քաղաքը...

Ու որքան գնացը խորասուզվում էր սարերի
գրկախառնութեան մէջ, նոյնքան էլ քաղաքը կամաց-
կամաց, ինչպէս գեղեցիկ պանօրամ՝ քօղարկում էր իր
կախարդիչ տեսքը...

— Ախոսու, ասացի, ես հազիւ զսպելով արցունքս,
երբ քաղաքը բոլորովին կորչելով լեռների քամակին-
տիրեց շրջակայքի խուլ ամայութիւնը...

Խորտակւած սրտով հեռացայ պատուհանից...

Ես նոր հասկացայ ինչ կը նշանակի թէկուզ մի-
քանի օրով բաժանեել հարազատներիդ գըկից, թողնել
այն օջախը, որի ամեն մի առարկան պարունակում է
թանգագին յիշողութիւն...

Հայացքս սկեռած յատակին՝ կըզակս հենած ձեռ-
քիս ափին՝ ես սուզեել էի ախուր մտքերիս մէջ...

* * *

Արդէն գիշեր էր, վազօնի մէջ հանգել էր ամեն-
մի ձայն, Միայն անիւների աղմուկն էր, որ ջրաղացի
շառաչիւնի պէս շարունակում էր իր տաղտկալի երգը...

Ես գուրս նայեցի: Եւ ինչ... դիմացիս հսկայ լե-
ռան թիկունքին կարծես հրդեհ էր բռնկել արձակելով
դեղին բոցեր... Երկար, ակնապիշ գիտելիս՝ թւում էր,
թէ երկնքի այդ լուսաւոր կըծքին կպել էր մի փայլուն
սարդ, որ իր ճկուն, երկար շօղափելիքներով, արագ, ու-
կի թելերեց չընալ ոստայն էր հիւսում...

Զէր անցել մի բոպէ, և ահա լեռան քամակից,
դուրս սողաց մի փոքր լուսինը, յետ քաշեց երեսի քողը՝
և ժպտաց... այնպէս, ինչպէս ժպտում է շղարցի տա-
կից երկչոտ բայց խորամանկ թբքունին, և աչքից
առաջ է այն վսեմ պատկերը, որին դու նայում ես
սրբազն դողով... կարծես մի աներեսյթ ոգի ձեռքին
ակին ունի, որի միջից կիսովին, լոյս է արցակում նու-

րական նշխարհ-լուսնինը... ականջիդ է դիաջում մի
ձայն, որ ասում է ներքեսում ծնկաչոք, գլխիկոր, մեղա-
պարտ լեռների ապաշխարող խմբին. «Ճաշակեցէք սրա-
նից, սա է այն մարմինը, որով քաւում են ամեն մի
յանցանք...» Նայում ես շրջապատիդ, նայում առաջիդ
ջեմ փափառվ աղօթողների այդ կենդանի շարքին
և քեզ էլ ներքուստ մի ուժեղ ձգտում յորդորում է ա-
կանջիդ. «Հոքիր, չոքիր և աղօթիր»...

Գնացքը, բերանից ծուխ ու բոց թափելով, ալա-
նում էր ծաղկափառ դաշտերի մէջ...

Եւ ծաղիկները, նիրհող քամու փաղաքշանքի տակ,
սթափվում էին քաղցր երազից, նայում պղտոր հայաց-
քով վազող, կատաղի՛ վիշապին՝ ու սոսկում.,.

Մինչ պաղ քամին, երազիդ մէջ այցելող սիրու-
հուղ անմեղ գուրգուրանքով գալիս, համբուրում և շա-
րունակ փաղաքշում էր ինձ:

Եւ վագոնի միօրինակ ճօճումների, անիւների աղ-
մուկի տակէ, որ մարդ, հակառակ իր կամքի, գլուխը
դնում է ձախ թևին, և հազիւ մի բոպէ անց՝ քուն է
ընկղմում:

Ախ, այդ բունը, որի ընթացքում քեղ չի տան-
ջում ոչ վիշտ, ոչ հոգս, և ոչ էլ կասկած կամ եր-
կիւղ... Երբ այսքան պարզ, Զինջ է մարդու հոգին, երբ
մենք ապրում ենք ծաղկի հանգիստ, արդար հաւատով..

Շատ քիչ, շատ քիչ է պատահել ինձ յետագայ
կեանքիս ընթացքում քնել այն խաղաղ նինջով... Ինձ,
որին, միշտ խայթել, վրդովել է նոյնիւկ ինձ համար
այնքան մութ, այնքան գաղտնի մի սարսափ... Ախ.
այդ թուխպը, որ սնունդ է ստանում իմ տանջանքով,
ինձ հետ էլ ապրում, ինձ հետ էլ աճում, որ դան-
դաղ սողալով հոգուս պայծառ կամարին, իր կարկու-
տով սպանում իղձերիս ամենից մատադ, ամենից
փարթամ շիւղերին...

Մինչ ես այնքան սիրում եմ կեանքը, ապրում իղձերիս արբունքին, ապրում բոյրի, երազների գուրդուրանքի տակ...

Թէ որքան էր տեսել այդ բունը, չեմ յիշում, բայց դուս փեղկի թափով մի դարկ ստիպեց վեր ցատկել ինձ:

Պատուհանից դուրս նայեցի:

Երկնքի պայծառ կամարից, կարծես ոսկէ փոշու մէջ, գժգոյն, մոայլ դէմքով, ակնապիշ, խորհելով իր տանջանքի հետ, գողարիկ սուզվում էր լուսինը, և զեղին ու կարմիր փայլով բորբոքել էր ամբողջ շրջակաքը... Իջել էր խունկի թեթև ծուխով մի ախորժելի մառախուղ, վարակել ինձ անուշ տանջանքով... Կարծես հոգիս թողել էր իր մահկանացու պատեանը, մոռացած իր տանջանքը, խաղում էր այն մառախուղի, այն ծաղիկների փնջի, բուրմունքի մէջ ինչպէս անհոգ թիթեռ...

Անցել էր արդէն երկու ժամ...

Սրելքում, գոհարի բոցով, շողաց խոշոր մի աստղ, որ կրկոտ գեղեցկունու ժպիտ-ակնարկով սկսեց գայթակղեցնել ինձ, ներքեց իրեն այնպիսի հաճոյքով, տանջանքով գիտողի հոգին...

Ահ, ես փորձել եմ կնոջ այդ գողարիկ, խորամանկ հայացքը, որ մի ակնաթարթում նւաճում է մարդու սիրտը, որ սանձ զնելով այր մարդու բերանին, ղեկավարումնըան այնպէս՝ ինչչու թելադրում է իր հաճոյքը...

Երբ հոգիդ շինելով երաժշտական մի գործիք՝ նուազում այն եղանակը, ինչ կը փափագի նրա ձնձուկի պէս կայտառ միտքը...

Սրելքն արդէն հետզհետէ սկսեց շիկնել փթթող վարդի պէս, ոչ, աւելի շուտ շառագունեց, ինչպէս իդձերով անարատ մի կոյս... Երբ նա երազի մէջ առաջին անգամ տեսնում է իրեն սիրած երիտասարդի մեղսա-

ից դրկում: Երբ արբունքի գեռ նոր հասած՝ առաջին անգամ իր անբիծ այտերի վրայ ճաշակում է այր մարդու շրթունքների այնքան մեղկ, այնքայն ախորժելի շփումը... որ ոգելից խմիչքի տաք հոսանքով գոգոսում է նրա մեղկ մարմինը և պղապթում, փոթորկում է նրա ջինջ սիրտը...

Յափշտակուած նայում ես երկնքին, դիառում, խորին զարմանքով թէ ինչպէս արագ, սուս ու գաղտագողի, իրար եղծում ու յաջորդում են սքանչելի գոյներ, ու երկինքը ամեն ակընթարթ բռնկում կարմիր բոցերով...

Մի բոպէ մոռանում ես, որդու ապրում ես մեր ժամանակ, քեզ երևակայում ես զիւցազնական զարի մի հերանոս ասպետ՝ որ ներքեռում ջերմեռանդ, աղօթող ամբոխի հետ անձկալով սպասում է արևի ծագին... Երկրպագում ու պսակում է զափնիքով իր կուռքի ճակատը, իսկ յետոյ զոհում իր պատարագը... Եւ ահա այդ կարմիր գոյնը զոհերի այն առատ արիւնն է, որ հոսելով ներկում է արևելքը...

Ինչ կը լինէր մարդու վիճակը, եթէ մի օր հանդչեր այդ հզօր ջահը... Դամնար լուսնի պէս մի ցուրտ, ամայի, խաւար մարմին...

Եւ հեթանոս մարդը ըմբռնում էր արևի այդ խորհուրդը, և որին նա պաշտում էր ամբողջ հոգով...

Ես նոր եմ հասկանում, թէ ինչ վաեմ միտք էր պարտըրակում արևի այդ կոյր պաշտամունքը... Հիանում, երբ մտքով մի վայրկեան ըմբռնում, թէ ինչ մեծ հոգի, ընդարձակ սիրտ, լնտիր ճաշակ և մաքի ինչ սքանչելի կորով ունէր հին, հեթանոս, որոնող, մարդը...

* *

Առաւօտ կանուխ հասայ Աղէքսանդրօպօլ:

Կամենալով խնայել տուանց այն էլ համեստ միջոցները, միւս կողմից, որպէսզի ծանօթանամ քաղաքի

հետ, ես որոշեցի ոտքով դիմել ծանօթիս տունը, մանաւանդ, որ ձեռքիս, բացի մի փոքրիկ պայուսակից, չը կար որևէ իր:

Բայց հէնց որ կայարանի սանդուխքներից իջնելով ոտք դրի փողոց, ինձ հետ հակառակի պէս պատահեց մի դէպք, որից յետոյ եկայ այն տիսուր համոզմուքին, որ ես Փարիզ չեմ եկել...

Այս դէպքը, որ կարիք չը կայ այստեղ յիշելու, այնքան ազդեց վրաս, որ ես բոլորովին կորցրի իմ ուրախ տրամադրութիւնը... Սկսեցի համոզել ինձ, որ ես իբրև խոհեմ մարդ պարտական եմ աւելի պաղ սրտով ընդունել որևէ կառապանի կոպիտ վիրաւորանքը...

Փնտուել այնպիսի մի գրաւիչ պատկեր, որ պահ մի սփոփէր ինձ...

Վերջապէս ինչու գանդատւել խելքից զուրկ մի գրաստից, որ յանկարծ քացի է տալիս կողքով պատահաբար անցնող մի անմեղ մարդու...

Բայց ինչ կուզէք ասէք, որտիս մէջ արդէն ծագել էր խուլ հակակրանք, շարունակ սպասում էի, որ այդ դէպքից յետոյ հերթով պէտք է դիմաւորէին մի շարք անախորժ արկածներ... Օրինակ հէնց այս մարդիկ, չը նայելով, որ նրանց հետ չունեմ ոչ մի կապ, որոնցից նոյնիսկ ես խուսափում եմ, անպատճառ նրանց և իմ մէջ կը ծագի որևէ թիւրիմացութիւն... Մարդիկ, որոնք տեսքով շատ խաղաղ և բարի անձիք են, բանի որ ձեռքներին գինիով լի բաժակ, իրար գրկել, իրար համբուրելով մաղթում են ամեն բարիք...

Կը տեսնէք... Հերիք է անցնեմ խանութի առաջով, (ուրիշ ճար չը կայ, միակ ուղին դա է), չի կարող պատահել, որ ես իմ „պատական“ արտաքինով չը գրաւեմ նրանց ուշըը:

Աջ կողմի գինու խանութից ականջիս էր դպչում գինովի մարդկանց վայրենի աղմուկ, վիթխարի, կոպիտ

թաթերի ուժքին ծափ, ոտքերի դոփիւն և արգանի այն զիլ հընչիւնները, որ բոթոթի հաջի պէս ծակում է ականջդ...

Բողոքելով բաղդիս դէմ՝ ես ձգնում եմ արագ փախչել այդ փողոցից...

— Եյ, բարեկամ, արի մէ բաժակ գինի անուշ էրէ... Ծո ուր, քեզի հետ եմ, եա, խուլ է իշու ձագ...

Տեսաք, ընթերցող...

Ինչին վերագրել, արդեօք, հագուստիս, թէ ձեռքիս բասկին, որ մատնում էր թէ ես մի օտարական եմ, և նոր եմ իջել վագոնից...

Մարդիկ երևի կամեցան, հպատակուելով իրենց բարքերին, «պատիւ տալ» ինձ...

Ես շուռ եկալ... Դիմացիս կանգնած էր, ձեռքին զինու մի փոքրիկ բաժակ, որ համարեած չէր երևում նրա մատների մէջ՝ մի շիկահեր վիթխարի, որ կանգնած տեղում օրօրվում և պղտոր աչքերով, որոնք ամեն ակընթարթ սուզում էին վերին կոպերի խորքը և կըրկին դուրս լողում ինձ էր նայում...

— Շնորհակալ եմ, ես գինի չեմ խմում ասացի ես, կանգնելով այնպէս, որ մեզ բաժանէր մեծ տարածութիւն և ապահովէր այդ բոի արջերի վաղաքշանքից որ «քէֆ»-ով եղած դէպքում այնպէս առատ շռայլում են ամեն պատահական անցորդի...

Օգտուելով դէպքից, արագ, որքան ուժ կար սրունքներիս մէջ, սկսեցի փախչիլ...

Այդ միջոցին էր, որ նախ ականջիս դիպաւ խնդիր, յետոյ յորդոր, իսկ վերջում մի լկտի լիշոց...

Զարմանալի է. ինչու օտար շրջապատիդ առաջին անախորժ դէպքը այնքան ուժեղ կնիք է դնում մարդու մտքին...

Տարիներ են անցնում, բայց երբէք չեմ մոռանում և միշտ, դժկամակելով ես յիշում այդ արկածը:

Անցնում եմ դեռ զլիսաւոր փողոցով:

Հեռուից ինձ դիմաւորում են ձեռքերի վայրենի և վտանգաւոր շարժումներով, աղաղակելով, իրար երեսին ամեն ակընթարթ կատաղի հայացք ձգելով, չէկ, թաւանազ, մարդու տեսքով մի տեսակ գիշատիչ կենդանիք, որոնք կարծես պատրաստ են ամեն յարմար դէպքում, քաղցից տառապող գայլերի պէս, յարձակուիլ իրանցից մէկի վրայ, յօշոտել, և մի ակընթարթում լափել հէնց ոճրի տեղում...

Ուստի, որպէզի միանգամից ապահովեմ ինձ որևէ վտանգից, ես իջայ մայթից, սկսեցի, քայլել փողոցի միջով...

Զըգիտեմ ինչով մեկնել, բայց թվում էր ինձ, որ անտառի մէջ եմ, այն էլ գիշերով, ուր խաւարի մէջ, ամեն մի թփից, ամեն մի ծառի խոռոչից, կեանքիդ վտանգ է սպառնում, ուր որևէ չոր տերեկի շշուկ որսալիս. սառսրում ես ամբողջ մարմնով... Սպասում, որ ահա դիմացի թւիի տակից դուրս կը սողայ մի իժ, որ մի ակընթարթում սեղմելով քեզ իր երկաթէ օղակների մէջ՝ կը խայթի քեզ ուղիղ կոկորդից... Դուրս կը թռչի որևէ գիշատիչ և կը պատառուի քեզ իր պաղպատի ժանիքներով...

Ինչու չեմ կարող ասել, հաւատում էի, որ անցորդ խմբից ահա այն մէկը, ամենից կատաղին, որ խօսելիս շարունակ սպառնում է բռունցքով կողքի ընկերոջ՝ յանկարծ, դէմքիս սենոած իր վայրագ, կարմիր բծերով, ապակու պէս փայլուն, ցուրտ ու նախշուն աչքերը, կը մօտենայ ինձ աղաւնի որսող կատուի պէս՝ և կը հարցնի...

— Ծո, ինչ ունիս, դու էստեղ, և առանց սպասելու պատասխանիս՝ չուխի տակից կը հանի դաշոյնը և կը խրի կրծքիս մէջ...

Այսպէս, ինձ համակել էր մի տարօրինակ կաս-

կած... եւ ես իմ շրջապատից չէի սպասում ոչ մի բարիք...

* *

Տօթէր: Վերեկից շէկ արել գլխիս թէժ բոցեր էր թափում, կարծես մէկը շարունակ ուսերիս տաք ջուր էր շուռ տալիս...

Փոշին, որ փողոցում ամեն անգամ որևէ կառը վազելիս ծուխի պէս թանձր ալիքներ էր կազմում, սողում էր բերանիս մէջ, եւ ստիպում շարունակ հաշգել...

Քաղաքը իր տեսքով աւելի շուտ յիշեցնում էր մի մեծ գիւղ, քան թէ քաղաք այն իմաստով, որի հետ կապում ենք հսկյ շէնքեր, ընդարձակ փողոցներ ուր տիրում է փեթակի խուլ աղմուկ, ուր հակառակ կողմերից դղրդալով սլանում են անթիւ կառքեր... ուր երկու կողմից, մի քանի յարկանի ճոխ կրպակներ, իւրենց միջի առատ գանձերով, լացնում են օտարականի խորթ աչքը, ուր ամեն մարդ, դաշտում հիւթ հաւաքող մեղուի պէս, գերի իւր հոգսերին, շտապում է իր գործին...

Ամենաին դա աւելի շուտ մի մեծ գիւղ էր: Այն, ինչ առաջին անգամ աչքիս ընկալ՝ մի գիւղացի էր, որ իր խրճիթի ընդարձակ հրապարակում—որի մի կողմում բարձրանում էր ցորենի ահազին դեզ, իսկ միւս ափին աղիւսների պէս իրար դարսած աթար, կանգնած կամին, ձեռքին բարակ ձիպոս, եղներին անխնայ բոթկելով, ստիպում էր պտոյտ գործել միևնոյն տեղում... Նա ցորէն էր կալսում...

Խեղճ կենդանիք...

Ինչքան իջնում էի դիմացիս փողոցով, որ ինչպէս ասեցի քաղաքի գլխաւոր, ուրեմն և հետաքրքիր թաղն էր, նոյնքան ինձ տիրում էր մի ճնշող զգացմունք,

որին չեմ կարող որոշել ինձ յայտնի ոչ մի բառով...

Արդեօք յիսաթափութիւն էր դա, թէ սարսափ, երբ կամաց—կամաց սուզգում էք կարծէք տղմի անդունդ, որտեղից չունէք վըկութեան ոչ մի ելք..

Կարծես յափշտակելով ինձ հարազատ շրջապատից աքսորել էին մի ամայի կղզի, մինչև մահ այնտեղ ապրելու անգութ վճռով:

Ես մենակ էի, բոլորովին մենակ, ինչպէս միշտ հալածանքի ենթակայ մի որբ... ուր ինձ գիմաւորում էին բոլորովին խորթ, խէթ աչքով նայող, նոյնիսկ կարծես, թշնամի մարդիկ, մարդիկ, որոնց հետ ես չունէի ոչ մի կապ...

Ուստի շտապեցի, որքան կարելի էր շուտ գտնել ծանօթիս տունը, և հետևեալ օրը կանուխ, հէնց առաջն գնացքով ուղերուել Անի...

Ճեռքիս հասցէ չկար: Բայց այդ հանքամանքը ինձ բոլորովին չէր տանջում: Ով չը գիտէ որ գաւառակոն փոքրիկ քաղաքում ինչ կայ աւելի հեշտ, քան թէ ծանօթի տուն գտնելը, ուր, ամենքը մեծից մինչև փոքրը ճանաչում են իրար, նոյն իսկ իրար տոհմի ծտգումը:

Որոշեցի փորձի համար, հարցնել հէնց առաջին հանդիպողիս...

Ուղիղ գիմացիս գալիս էր, գլխին մորթէ, երկար գանգուրներով ահագին փափախ—մի թզուկ, որի տակից, սև խաղողի զոյգ հատիկների պէս, փայլում էին փոքրիկ աչքերը... Իր բարդուկի պէս կարճ ու հաստ մահակով նա անինայ խփում էր խեղճ իշոււկի խոշոր, կարմիր վէրքերով լի յետոյքին, որ ամեն անգամ տիրոջ անգոյթ հարւածների տակ սայթաքսում էր, կամ ուղակի հոլի պէս, արագ, թեթև բայլերով առաջ վագում...

Իսկ երբ թշւառ կենդանին յոգնած սկսում էր աւելի դա նդադ քայլել իսկոյն նահատակ կենդանու մէջըին

իջնում էր անողոք հարուած, որին անմիջապէս հետեւում էր աւելի շուտ տիրոջ պատիւը, քան թէ իշուկի անձը վիրաւորող յիշոց...

— Լսիր, այ մարդ, չես ճանաչում այս ինչ մարդու տունը, հարցըի նրան այն միջոցին, երբ նա անցնում էր իմ կողքով...

— Չուշ...

Պատասխանի փոխարէն թզուկ ծերունին արձակեց վերի հնչիւնը... Յետոյ առաջ ընկաւ, կամենալով արգելել իշուկի ընթացքը, ըմբիշի պէս բռնեց կենդանու վլուխը...

— Ի՞նչ, * խաղող, գարձաւ նա ինձ ձեռքի ափը հովանի տալով ձակատին... Այդ ըոպէին նրա աչքերում բռնկել էր ուրախութեան մի ուժեղ բոց:

— Գրւանքէն 2 կոպէկ, մէ տես ինչ ապրանք է, աղա, ասաց նա, հիացմոնքով բարձացըրեց մի մեծ ողկոյզ... նոր, էս օր եմ քաղել իմ բաղից. մէ համը տես է, մի քաշուէ, հալալ է...

Նա մեկնեց ինձ խաղողի ճութը և առանց սպասելու կարծիքիս, պոկեց մի քանի հատիկ, հաւաքելով բուռի մէջ, նետեց բերանը... Ծերուկի սիրտ չը կոտրելու մտքով ես գնեցի մի քանի գրւանքայ:

— Ապէր, չը գիտես, որտեղ է ապրում այսինչ մարդը, զիմեցի ես ծերուկին, երբ նա, քիչ յետոյ: արագ, «զըաբար» մի շաք օրինէք թափելով՝ խթեց մարտիրոս կենդանու հիւանդ կաշւին...

— Նալբադ Աւագի թոռը, մէրը որ խօլերին մեռաւ, մէ քոյրը Մոսկովէ, մէկն էլ էս տարի նշանեցին...

Եւ ծերունին, որ ոչ մի կապ չունէր իմ ընկերոջ

(*) Լաւ չեմ յիշում, ինչ միրդ էր, բայց սրպէվի չը գունդ այս պատկերը, ինձ թոյլ եմ տալիս թէրեւս այս սխալը:

հետ, սկսեց մի առ մի կարդալ ծանօթիս տոհմի պատմութիւնը...

— Այ, էսպէս որ դիւզիջնես, աղա, ու ծուռիս ձախ կողքիդ քիւչէն՝ դիմացիդ կելնէ կանաչ տուն...

Հէնց էնէ, ասաց ծերունին և ողջերթ մաղթելով խթեց իր շարքաշ կենդանուն...

Ընկերս մի ուրախ և հիւրընկալ երիտասարդ էր, Մանուկ հասակից Թիֆլիզ գալով մեր տուն գիշերօթիկ էր մտնլ: Երկու հարագատ եղօր պէս միասին ապրել աճել էինք մօրս հոգատար ձեռքի տակ, միասին դպրոց մտել, և միասին աւարտել... Վերջին տարին պաշտօնով կրկին վերադարձել էր հայրենիք՝ ծնողների գիրկը...

Ինձ որ տեսաւ, քիչ մասց երկրորդ յարկի պատշաճամբից փողոց թուչէր... Սկիւռի պէս իրար յետևից մի քանի սանգուխը փոխելով, վագեց, ընկաւ գիրկս... Սկսեց իրար հետեւից այնպէս արագ հարցեր տալ և միաժամանակ այնպէս համբուրել, որ ես չը գիտէի որին պատասխանեմ, համբոյրին թէ հարցերին...

— Դու այստեղ, այս ինչ հրաշքով... Գոնէ նամակով յայտնէիր: — Զէ, կամ սիրուհուդ ես հետեւում կամ քեզ այստեղ աքսոր են ուղարկել... Ես յայտնեցի, որ գնում եմ Անի, իսկ այս զիշեր մեկնում եմ: Սպառուելով նրա ուժեղ բազուկներից, բարձրարանք վերև ու նստեցինք պատշգամբում աճող պատառուկի թանձը հովանու տակ:

— Այո զիշեր, խելքի եկ, այս ամառ դու իմ գերին ես, չեմ, թողնիլ, մեր բազաքը հրաշալի ըշակայք ունի ամեն առաւօտ կանուխ զարթելով՝ կերթանք թափառելու սար ու ձոր...

Ես մերժեցի, Մի քանի կարեոր գործեր ինձ ստիպում էին հինգ օրից յետոյ կրկին ուղևորուիլ Թիֆլիզ: Եթէ ոչ այդ զիշեր, զոնէ վաղը շատ կանուխ պիտի գործով մեկնէի մերձակայ մի գիւղ, իսկ զիշերով ուղևորուիլ Անի:

Սաստիկ յոգնածէի, շոգից ու ծարաւից լեզուս ցամաքել էր, ես մի բաժակ պաղ ջուր խնդրեցի:

— Ինչ ջուր, հիմի ուր որ է պէտքէ ճաշենք... Բախտ ունես, անպիտան, այսօր ճուտով վլաւ ենք եփել...

— Ավսոն, ախորժակ չունեմ, սաստիկ թոյլ եմ... Այ, եթէ վլաւի տեղ այս զով տեղում մի փափուկ անկողին փռես՝ կը քնեմ ինչպէս դիակ... Նա հակառակեց, ես թախանձեցի, բայց մի քիչ խօսք ու զըոյցից յետոյ նա կատարեց իմ ինսդիրը: Հէնց որ մէջըս դիպաւ դոշակի փափուկ, ախորժելի երեսին՝ իսկոյն ինձ պատեց վերին աստիճանի մեղկ, հաճելի թմիր... Ամբողջ զիշեր գնացքը ինձ հարել էր ինչպէս թակարդ ընկած կենդանու...

Սրդէն երկոյ էր, երբ զարթնեցի: Տօթից յետոյ փչում էր, բազուկներիդ մէջ յուզմունքից հեռող կոյսի մեղկ շնչառութեան պէս վերին աստիճանի ախորժակ սիւր, որ խաղալով զէմքիս՝ աղբիւրի ցուրտ ալիքներով զալիս զովացնում էր ամբողջ մարմինս...

— Դէմքիդ շարունակ ժպիտ էր խաղում, բարեկամ, ում էիր գրկել երազիդ մէջ զիմեց ընկերս հեղնանքով, երբ նստեցի պատրաստի սեղանի կողքին...

— Փէզ, պատասխանեցի կարձ ու կտրուկ՝ հասկանալով նրա ակնարկի միտքը...

— Մօտ եկ, մօտ, զարթել ես երկի լի գրպանով բայց զատարկ ստամքուվ... Մի տես ինչ ունինք, թայզա հաց, կանաչ, խնկահոտ մեղք, հրաշալի կարագ:

Թէյից յետոյ մենք դուրս ելանք զբունելու:

Այդ միջոցին էր, որ յանկարծ դիմացի ծառերի խիտ արանքից ականջիս զիպաւ երաժշտական խմբի ուժեղ, զիւթիչ գեղգեղանք, որ մի ակնթարթ թիթեռի պէս, ոչ, քամու ալիքների պէս, խաղաց ականջիս ափին, իոկ յետոյ խուլ, հառաջող ար ձագանք տալով հանգաւ հեռուն, սարերի գրկում...

Դա ինձ ծանօթ ասիական մի սգաւոր եղանակ էր, որ կարօտի բոցով յանկարծ բռնկեց հոգիս, երբ նրա թռուցիկ խաղը զգացի ինձ բոլորովին օտար երկնքի տակ:

Փոխելով մի քանի կարճ ու նեղ փողոց մենք մտանք քաղաքային բաւական ընդարձակ այգին: Նայելով գիրքին նա գտնվում էր կարծես քաղաքի կենդրոնում: Փայտի ահագին հողանոցի տակ նուագում էր զինւոր-երաժշտների խումբը, իսկ նրա շուրջ պտոյտ գործելով, զբունում էր տեղական դպրոցների երկսեռ, մատաղ սերունդը, որ հէնց առաջին հայացքից ամեն տեղ, կարմիր գոյնի պէս, աչքի է խփում:

Աղմուկ էր տիրում: Ամեն կողմից հնչում էր դեռ մանուկ սրտից բխող ծիծաղ, քրքիջ, որ ձուլւելով ճընճուկների, երեկոյեան այնքան հրապուրիչ ճիշ-աղմուկի հետ, ներշնչում էր մարդու, մանաւանդ ինձպէս օտարականին, այնպիսի աշխոյժ, որ մարդ սրտով փափագում էր մոռանալ և տարիք, և հոգս, դառնալ մանուկ և ուր գիտ նորթի պէս վաղել, ծիծաղել ու քրքջալ...

Բայց յետոյ ինձ սկսեց կոծել մի բոլորովին հակառակ զգացմունք... Ի՞նչ էր դա, արդեօք, խորթ շըրջապատի մէջ ապրող պանդուխտի կարօտ, որի կողմական ըստի մէջ ամեն բոլէ անցնում են «թշնամի» դէմքեր, ու երեսին նետում խէթ հայացք... Սրտիս ուղարկի դիպչում էր, որ այդ ահագին ամբոխի միջից ոչ ոք չէր ժակում, ոչ ոք չէր բարեւում ինձ... կարծես ամեն ոք զաղանի ակնարկով իմաց էր տալիս, որ ես խորթ եմ, որ ես, օտար եմ նրանց մէջ, և նոյնիսկ զարմանքով հարցնում: «Ո՞վ ես դու...»

Լաւ էր, որ ընկերս բաւական աշխոյժ երխտասարդ էր: Նկատելով իմ թախիծը, աշխատում էր ամեն կերպ գրաւել ինձ, պատմելով իր կեանքից և տեղական բարքերից հետաքրքիր դէպքեր:

Դուրս զալով այգուց, մենք մի ժամի չափ սկսեցինք շըջել քաղաքում, որից յետոյ վարձեցինք կառք, որ ինձ պէտք տանէր մօտակայ մի գիւղ և մի օրից կրկին յետ բերէր քաղաք...

* *

Մի չընաղ առաւօտ էր, երբ միւս օրը հրաժէշտ տալով ընկերիս՝ կանուխ ուղևորուեցի դէպի գիւղ:

Վաղորդեան մառախուղի միջից, որ եռացող կաթսայի թանձր գոլորշու պէս ծածկել էր ամբողջ շըջակայը—սպիտակ բոցով շողողում էր արեւ, որ ինչպէս մի հսկայ սարդ՝ իր կնձիթ—շողերով խայթում ու ծծում էր կարծես մարմինս հիւթը...

Այս, այդ մառախուղը որ գոյանում էր արևի բաղաքշանքով, վաղորդիան ցողի տնթիւ շիթերից...

Շիթեր, որոնք այժմ բռնկել էին կանթեղի սքանչելի բոցերով և ժալում ծաղիկնըրի երազող աշքերում...

Այդ ցողը, այն արցունքն, որ նրանք թափել էին գիշերնիվ, ծածուկ հեղ սրտի տանջանքի տակ...

Լուսի խաղաղ, միխթարող գուրգուրանքի տակ...

Արցունքը, սիրոյ համբոյր, տառապանք երազող ծաղիկների.., երբ լուսինը, թոքախտով ընդմիշտ տառապող այդ գժգոյն պատանին պատմում է իր գժբախտ սիրոյ սքանչելի, յաւիտենական նէքեաթը... եւ ծաղիկները, ճրագի բոցերի պէս այդ զգայուն հոգիները, կարեկից իրանց զժբախտ եղրօր սրտի մոմուրին՝ այնքան լացել, արցունք են թափել ամբողջ գիշեր... Իսկ այսօր առաւօտ կանուխ արևն է, որ իր ջերմ գուրգուրանքով չորացնում է նրանց աչքերից այն թունաւոր հեղուկը, կրկին ոյժ տալիս նրանց սրտին, ստիպում վերստին բարախսիլ ապքելու ոսկի արբունքով...

Այդ արցունքն էր, որ այժմ մառախուղ դառնալով ձուլում է կոյսի և պատանու արցունքի շողու. հետ... աշունքին, երբ մարդու սիրտը վլատակների կոյտ, իսկ

նախկին ծաղկավառ, կարծես յաւիտենական կեանքիցնորբով ապրող դաշտը անսապատ է դառնում...երկինքը, այդ մատաղ այրին, երեսին սև քող կլոկին արցունք շինելով այն գոլորշին՝ պիտի ցողի ամբողջ օրերով, ողբալով ներքեռում թառամող ծաղիկների արցունքի մահը...

իսկ հեռուն, թանցը մառախուղի միջից, արևի տակ ընկած գոհարի բոլոր փառահեղ ցոլերով, կարծես ամբողջովին ջինջ, սառուցից ձուլած վեթխարի մի կոն փայլում է Արագածը, իր ամբողջ վեթխարի հասակով...

Նայում ես, նայում և հիացմունքից ուղակի քարանում... պահ մի կանգնում և խորին հաճոյքով դիտում այդ սքանչելիքը... որ հետզետէ կարծես հալու ուելով փոքրանում է արևի ջերմ շողերի տակ և կազմում կանթեղի այն ազրիւրները, որոնք կարկաչելով հոսում, ոռոգում են Շիրակի ամբողջ շրջակայքը, որ Արագածի արցունքով այնքան բերք է տալիս հայ գիւղացուն...

Մի ըստէ կարծես տեղափում են քեզ հին, դիւցագնական աշխարհը, երբ մեր հայրենիքում ապրում էր վեթխարի մի ցեղ... եւ ահա դա նա էր, հակաների այն պարթե արքան, ձիւնի պէս ճերմակ ավիքներով... գլխին խաչակիր, խոշոր ակներով բոցավառ մի թագ, ճեռքին յաղթական գայիսոն, թիկունքին բեհեզի ծիրանի՝ կարծես վճռում է իր հապատակների դատը, կամ խորհում գալիք պայրարի մասին...

Թէև դիմացիս քամի էր վշում, որ զգալի չափով երբեմն զովացնում էր տապը, բայց շրջակայքում բըռնկել էր մի թէժ հնոց, որ իր բոցերով խաղում էր երեսիս, թիկունքիս, և մարմիս մէջ սրսկում վերին աստիճանի անախորժ ջերմութիւն...

Երեսիս արցունքի պէս խոշոր բըտինը էր հոսում, որ սոծակի պէս կարծես ծածուկ խայթելով սրսկում էր թոյնի մի փոքրիկ քանակ, որից դէմքս մըմուռ ու քոր էր գալիս...

— Շնուտ կը համնենք գիւղ, հարցըի ես կառապանիս, որ բաւական առողջ, շաղգամի պէս կարմիր, հաստ վզով, թաւ ու սև մօրուքով մի ժիր մարդ էր:

— Ի՞նչ, կը շողիս, աղա, չես դիմանայ, ախր քաղքի ես, տօթի, սառնամանիքի սովոր չէք, նախտտելսվու ձախ կողմից նայելով դիմեց ինձ...

— Առաջներիս մէ ժամի ճամփայ ունինք, ոչինչ, քիչ արագ կը քշենք... դէ չուստ, նա թեթև կերպով խփեց աջ կողմի ձիու պարարտ փորին...

— Բաս էսոնք ի՞նչ էնեն, որ առաւօտուց կանուխ, թէժարեի տոկ արուն—բրտինք կը թափին..

Եւ նա զլխով ցոյց տուեց մի շարք հնձւորների, որոնք մինչև գոտին հասկերի մէջ, ձախ ձեռքին մանգաղ, իսկ աջով հովանի տուած ճակատին, զարմանքով հետեռում էին հետաքրքիր ուղեորին:

— Կանայք էլ են աշխատում, զարմանքով հարցի կառապանիս, որ մի առանձին սիրով սպասում էր հարցերիս և ձգտում սկսել ինձ հետ բարեկամական զրոյց:

— Բաս ի՞նչ, ամենքը, ամենքը, մեծ ու պստիկ: Մեր կանանց ճեղի պէս ծաղկի նման հօ չենք ինամէ, տես, ի՞նչ ուժով, հաւասար, ի՞նչպէս մէ լծկը եղ-ընկեր՝ կաշխատին:

— Եւ այն էլ այս կրակին, հագներին վերմակի պէս ըրդէ շորեր, երես ու զլուխ շալով փաթաթած:

— Է՛, ի՞նչ էնեն, ախր ջահէլ հարս է, տէգոր հետ հունձ կը քաղէ, ամօթ է... էնէ, տես, աղա, խօսելով էղանք, ճամբէն փոխինք... Մի քիչ պէտք է ոտքով քալէք, մինչև որ դիւղ ճամբան գտնինք:

Թէև դժկամակելով, որ հանդիպեցի այսպիսի անախորժ արկածի, բայց և այնպէս ես իջայ կառքից:

Ընկել էինք նոր հնձած արտի ակօսների մէջ. դա ճիշտ որ վաագնաւոր ուղի էր: Հերիք էր որ կառքը ընկնէր այդ փոսերից մինի մէջ: Նա կարող էր շուռ գալ կողքի վրայ:

Ես հազիւ ոտք փոխելով, սկիւռի պէս, որ ծնւռւմ ու մեռնում է ծառերի գագաթին, մագլցելով, ամեն քայլում սայթաքելով, հետեւում էի կառապանիս, որ աշը թի տակով հսկում էր ինձ. իր պարզ գեղջուկ ոճով ծաղըում փափկամորթ քաղաքացուս, մի ծաղը, որ ոչ միայն չէր վիրաւորում ինձ, այլ խորին հաճոյք էր պատճառում:

— Սա ի՞նչ գիւղ է, հարցրի կառապանիս, երբ խսկապէս հոյակապ, խիտ կամարների տակ նկատեցի թուխսի պէս կուչ եկած մի շարք տներ:

— Էղ մի շատ հարուստ գիւղ է, պարոն, թէ իր բերքով, թէ սառուցի պէս ցուըս աղբուրներով. Ամբողջ գաւառում մի հատիկ է... ջուր, ի՞նչ ջուր... թէ մի սաղ ոչխար ուտես, ու վրան ըիչ խմես, շաքարի պէս կը հալի:

Դիւզ Արագածի դոշէն կուգայ...

Այդ միջոցին էր, որ յանկարծ աջ կողքի արտի միջից գուրս վաղեց մի գիւղացի, եւ շտապ, իր ձեռքի մահակով, սկսեց հալածել իշուկին կառքի ճանապարհից, ուր անհոգ կենդանին հանգիստ արածում էր:

Այդ գեւզացուն էր, որ կառապանս գլխարկ հանելով՝ պատկառանքով ողջունեց:

— Ո՞վ էր:

— Գեղի երէցը, պարոն:

— Բաս ինչի սքեմ չունէր հազին:

— Կաշխատի: Գլխին կամիլաւկա ունէր, չը տեսար:

Ես իսկոյն կանգնեցի կառքի մէջ, սկսեցի մի քանի ըստէ զիտել եկեղեցու այդ տարօրինակ սպասաւորին:

Դա մի նիհար, բարձր հասակով, առույգ ծերունի էր, հազին գեղջուկի հասարակ բաճկոն, ոտքերին արեխ էր գլխին կարմիր թաշկինակ, որի երկու ծայրը ծոծիսկ պահից կախ էր ընկել հաւի պոշով. վրան մի ժամանակից կախ էր ընկել հաւի պոշով:

Նակ կապոյտը գոյնի. բայց ներկայիս բոլորովին խունացած կամիլաւկա. որից նոր միայն հասկացայ նրա կողումը:

— Կը զարմանամ, պարոն, դարձաւ ինձ կառապանս քթի տակին ժպտալով, շարունակ միամիտ հարցերիս սպասող:

Նա գւարճանում էր ուղակի, որ ես, հիմնովին անտեղեակ՝ զարմանքով եմ նայում օտար շրջապատիս կեանքին, բարքերին:

— Կը տեսնես, պարոն, գիւղում ամեն ոք կաշխատի, մեծ թէ պստիկ... աղի քըրտինքով կապրին... մենք հօ ձեզ պէս չենք:

Զըդիտեմ ինչու, կառապանիս այդ ճիշտ ոք միամիտ. բայց վերին աստիճանի տեղի յանդիմանութիւնը սաստիկ աղդեց...

ՄԵնք, որ ապրում ենք այս նահատակների տանջանքի գնով... կողոպտելով նրանց աշխատանքի ազնիւ վաստակը...

Արանց, որ այժմ աշքիս առաջ, խորովելով արևի տակին՝ արիւն բրտինք են թափում... և յետոյ պարածանքով թմբուկ զարկում, թէ մենք ենք, որ ստեղծում ենք գեղարուեստ. գիտութիւն:

«ՄԵնք հօ ձեզ պէս չենք:

— Պարոն, կողքնիդ հօ թանկագին կապոց չունիք, երեսին թեթև երկիւղ, յանկարծ դիմեց կառապանս:

— Զէ, միթէ այստեղ աւազակներ են ապրում...

— Կապրեն... գողեր, ի՞նչ գողեր, մազդու աշքից թերթերունք կը յափշտակին: Խամ էլ էք... մէ տեսէք ի՞նչը կը վագին:

Եւ իրաւ, առջեկս ճիչ, աղմուկ արձակելով, գայլ հալածող շների վոհմակի պէս, դէպի մեր կառքն էր վազում ամեն սեռի, տարիքի, հազին ցնցոտիք, բորիկ մուրացիկների մի ահազին ամբոխ...

— Սրանք հվեր են, զարմանքից քարացած դիմեցի կառապանիս:

— Բոշաներ են, պարոն, բոշաներ, սարսափով բացականչեց խեղճ մարդը:

— Թէ առանց փոձրանքի ազատուանք, էսոնց ձեռքէն, տղամարդ ենք...

Եւ ձիերին անխնայ մտրավելով, համարեա ենթարկելով շուռ գալու զտանգին՝ սկսեց ամբողջ թափով քշել կառքը... մի ակնթարթ էլ՝ և ոլանալիս ականջիս դպաւ նախ ճիշ-աղմուկ, յետոյ որսացի բարակներից փախչող գոհերի մի քանի տասնեակ խոշոր, վառ աչքեր, լսեցի յարձակման հրաւիրող, ազդու կոչ՝ և չը գիտեմ ինչպէս, բայց մի ակնթարթում սկիւով պէս կառքիս երկու կողմից ներս ցատկեցին մի քանի հոգի և սկսեցին միանգամից կողոպտել ինձ:

Ես ինձ կորցըրի...

Կուչ գալով կառքի անկիւնում, որպէսզի զոնէ մէջքով պաշտպանեմ գոյքս թալանից, ես սկսեցի կզակիս տակ մեկնած ձեռքերի մէջ մի քանի սև զրամ խոթել:

— Զը տաս, աղա, չը տաս, աւելի կը կատղին, գոռում էր կառապանը և մտրակի ամբողջ թափով ձաղկում նրանց համարեա մերկ մարմինը:

Իզնուր: Զեռքիս փողը բորբոքել էր նրանց վայրենի ախորժակը:

Ուրիշ ելք չըկար, Ստիպուած հետևեցի կառապանիս խորհրդին: Եւ հազիւ, կառապանիս օգնութեամբ, աջ ու ձախ, ամեն հանդիպողի փորին, կրծքին քացի տալով, կարողացանք, ցած թափել կառքից... որոնք յաճախ կպչելով տղրուկի պէս կառապանի աթուին, քիչ էր մնում կողոպտէին միջի նոյնիսկ կօշիկ-ները:

Բայց այսպիսի վայրենի թակով էլ չը կարողացանք իսպառ հալածել այս երկոտանի զազաններին:

Մինչ դեռ կառքի առաջ, ձիերի դնչի տակ վխտում էր մի խումբ, որ կատաղած շների պէս ճգնում էր խափանել ձիերի ընթացքը, մի ուրիշ, աւելի մեծ խումբ, կառքի յետելոց էր վազում:

— Տեսմը, պարոն, ինչ արին, առաց կառապանը հաղիւ շնչելով, երբ բաւական տեղ ճողովրելով զգացինք մեզ ապահով:

Ոչինչ չը կարողացայ պատասխանել... զարմանքից քարացել էի... ոչխարի ապուշ հայեացըրով նայում էի կառապանիս դէմքին:

Այսքան էլ անպատկառ երես ..

Իսկ կառապանս, որ շարունակ մտիկ էր տալիս իմ ապուշ դէմքին՝ զրկած իր ահազին փորը, գնդակի պէս թոշկուելով, կարծես նստած էր զսպանակով մահճակալի վրայ, լուռ, խոշոր արցունք թափելով քըրք-ջում էր, ու երբեմն էլ թեռվ սրբում խոնաւ աչքերը:

— Բան հօ չը թոցըրին, պարոն, փորձանք գուշակող մարդու դէմքով յանկարծ հարցըրց նա ինձ:

— Ոչինչ...

— Բաս էս ինչ կը զգեն...

Ոտքի կանգնելով նայեցի հեռուն... եւ, վախից ու զարմանքից քարացայ: Արդեօք, տեսել էք, ընթերցող, ինչ վայնասուն է ծագում փողոցում թափառող, կը-մախքի պէս նիհար, շների հոմակի մէջ, որնոք շատ անգամ շարքով նստուած սպանդանոցի առաջ, կատաղի հետեւում են սպանդարի ձեռքին և յանկարծ նրանց մէջ փորոտիք են նետում:

Ո՛չ, աւելի շուտ, կարծես գայլերի ոհմակի մէջ ոչխար էր ընկել, որին ամեր կողմից պատառուելով՝ մէկը յափշտակում է փորոտիքը, միւսը ազդրը, իսկ առհասարակ ամեն ոք աշխատում է խլել ուրիշի պատառը:

Սրտիս մէջ կառկած ընկառ: Արդեօք այդ գայլերը

հօ չէին յափշտակել որևէ իր: Գոյքերիս մէջ կար մի կապոց, որ նրանց աչքին չէր կարող ունենալ ճանապարհին ընկած քարի չափ էլ արժէք. իսկ ինձ համար ոսկուց՝ այդ աղնիւ մետաղից էլ բարձր գին:

— Ի՞նչ են ծլկել, կրկնեց իր հարցը կառապանը, որ անհանգիստ հետևում էր գէմքիս խաղին,.. որից կարծես կամենում էր գուշակել կորստիս արժէքը:

— Հացիս պաշարը, երկուսով էլ կուշտ ծիծաղցինը:

— Ասել է թէ մինչև գիւղ կամքիդ հակառակ ծոմ պիտի պահես, աղա:

— Ելի գոհ եմ, որ այդ զոհով փոխանք... լաւ է ոտից գլուխ չը մերկացրին:

— Եղով պարտես ձիերուս արագ վազքին, աղա:

— Շուտ կը հասնենք:

— Ի՞նչ լսեմ, առաջնիս մէ ժամու ճամփայ կայտեւ, կարծես ինձ միտթարելու մտքով, նա երկու անգամ մտրակեց ձիերին:

— Ի՞նչ գործով Ս. գիւղ կերթաք:

— Ու խտ եմ գնում:

— Ու խտ, ինչ ուխտ, աղա, հոս հէջ սուրբ չը կայտես ունեմ...

Եւ... իրաւ, այնտեղ անցեալ գարունքին թաղեցի մի սրբազն աւանդ. վաղաթառամ մի մատաղ կեանք... զնում էի համբուրելու այն շիրիմը... կատարելու նրա կտակը, իսկ իմ խոստումը... եթէ մարմինը մեռնում, չէ որ հոգին կենդանի է, որ շարունակ հետևում էր ինձ հեկեկում ականջիս տակին:

Ես յիշեցի նրան.. կրկին հոգուս պատանեց սև թախիծը: Մի հին, սուր կսկին գարեալ սկսեց կոծել սիրտս... զլիս մէջ, ինչպէս փեթակում եռացին մեղուների պէս անցեալի սև յուշեր և սկսեցին անողորմ կերպով խայթել ինձ:

Ես մղկտացի, հոգիս, բռնկեց ներսից և սկսեց ծխել... կամաց, հետզհետէ... դալար խոտիպէս... որի ծուխը իր դառը քուլանելով սողաց քթիս միջից...

— Ողորմի հոգուն... խոր ախ քաշելով կառապանս հանեց գլխարկը և հաւատով խաչակնքեց երեսը:

* *

Արդէն կէս օր էր:

Վերկից հեռաղիտակի ապակուպէս, կիզում էր արել: Ուղակի տօթ էր, մի ժամանակ, երբ շրջակայքում մեռնում է կեանքի ամեն մի նշոյլ, և ամեն շընչաւոր տօթից փախչելով, որոնում է զով տեղ, երբ արտերի մէջ իրանց հով թագստից հնչում է լորերի միօրինակ, բայց այնքան ախորժելի կանչը, և ճպուռների եռանգով հասկ սղոցելու յատուկ ձայնը:

Երբեմն միայն հարաւից փչում էր բարակ քամի, որ սահելով հասկերի կատարներին՝ գալիս, դիպչում էր շիկնած դէմքիս և կոյսի մեղկ համբոյրի հաճոյքով գուրգուրում ինձ:

Ամբողջ շրջակայրը այդ միջոցին ծփում էր, ինչպէս արեկի տակ, արծաթի ցոլքով օրօրուող հսկայ լիճ:

Կառքը արդէն մօտենում էր գիւղի սահմանին, ճանապարհին հանդիպում էին ամեն հասակի, սեռի գիւղացիք, որոնք իսկոյն կանգնելով ինձ էին նայում ու ակնածելով զլուխ տալիս ու գունաթափերեսով հարցնում կառապանիս:

— Ո՞վ է, աղէն:

— Չինովիկ է, չինովիկ... գիւղ կերթայ... պատասխանում էր պարծանքով կառապանս: Արդեօք, գիւղացիներին վախ աղելու, թէ, իմ կամ իւր արժանիքը բարձր պահելու ռամիկների աջում:

Խեղճ մարդկ:

Գինովի մարդու խոպոտ հաշով կառքի վրայ յարձակուեց բրդոտ մի շուն: Բարեբախտաբար ժամանակուց բրդոտ մի շուն:

կին կողքիս խրճիթից դուրս վազեց մի՛ պարթև գիւղացի, որ փրկեց ինձ գազանի վտանգաւոր արշաւանքից:

Կառապանիս պատուիրեցի քշել դէպի երեցի տունը, ես նրան ճանաչում էի անցեալ տարուց, նրա որդու միջոցով, որ ուսանում էր ինձ հետ միևնուն բարձրագոյն դպրոցում:

Լինելով միևնուն ժողովրդի զաւակ, պատահելով մեզ բոլորովին խորթ երկրում՝ մենք շուտով բարեկամացանք, և մի ամբողջ տարի սիրով ապրեցինք մի յարկի տակ:

Այս տարի արձակուրդին նա չեկաւ հայրենիք, այլ մեկնեց արտասահման լեզու սովորելու և իր ճիւղին պատկանող նոր գիւտերի հետ ծանօթանալու:

Նա ինձ խնդրել էր, որ դէպք լինելիս մտնեմ իրենց դիւղը և իր կողմից բարեկմ ծնողներին:

Ինքը, երեցը՝ բարի, հիւրնկալն պարզ գիւղացի էր, որ ինձ հարազատ որդուց բոլորովին չէր ջոկում: Կառքը կանգ առուր քար է գողտրիկ շէնքի առաջ, որ կողքի գետնափոր խրճիթների մէջ դղեակի տեսքով էր երեսում:

Մի՞ բոպէ անց՝ ներսից դուրս թուաւ հագին սպիտակ սքեմ, թէս ծեր, բայց առոյգ քահանան, ճանապարհին հաւերի մէջ յուղմունք ձգելով. յետով հաշելով ու խայտալով փոքրիկ շուն, վերջում բոքիկ ու գըր-խաբաց տիրուհին:

Քահանան ընդ առաջ վազեց, բայց երբ տեսաւ, որ որդու փոխարէն նրան գիմաւորում է ընկերը, յանկարծ կանգնեց ճանապարհին և աղաղակեց միակ որդին կորցրած ծնողի խորին կսկիծով:

— Մենակ ուր ես եկել... որից յետոյ երկու ձեռքով պինդ խփեց գլխին. ուղակի շւարեցի: Զէի կարող սպասել, որ նախ կը գիմաւորեն այդպիսի լաց ու կոծով, և յետոյ իմ այցելութեամբ այդքան կարող եմ խոցել ձերունու սիրտը:

Մինչ այդ, տիրուհին, որ յետեռում էր մեզ, երբ տեսաւ լացող ամ ւանուն, գուշակելով որ իրան պէտք է մի գոյժ հաղորդեն, յանկարծ ճշաց և ծալապատիկ նստեց ճանապարհի կէսին...

Այս էր պակաս... ահագի ճիկ թափելով ես հազիւ կարողանում էի զսլել ծիծաղ, մանաւանդ որ այդ միջոցին մէկը ջնուր էր շուռ տալիս տիրուհու գլխին:

Որպէսզի շուտով փարատեմ այս անտեղի լաց ու կոծը, շտապով հանեցի ծոցիս գրալանից որդու նամակը և յանձնեցի հօրը:

Քահանան ողջ կանաչ, կարծես քակում էր հիւանդ հարազատի մասին ստացած հետազիրը, դողալով բացեց նամակը և սկսեց արագ կարդալ:

— Դէ, ծնող ենք, որդի, մի հատ զաւակ ունենք, աչքիս լոյսի պէս պաշտում ենք...

— Իշիր կառքից, որդի, իշիր... Արի մի համբուրդ հմ, էղուէս... ցաւից էլ խելք չը կայ գլխիս: Իրերդ բեր սենեեակ:

Ես շտապով կատարեցի նրա հրաւերը, որին վազուց էի սպասում: Յետոյ կառապանիս պատուիրեց ձիւերին տանել գիմացի ախոռ, իսկ ինձ ուղարկեց կողքի սենեեակ, ուր քիչ յետոյ ներս մտաւ, ուսին ղենջակ և աջ ձեռքին թաս, իսկ ձախում կոնք՝ բորբիկ, բայց քիթ, պուռնկ խնամքով ծածկոծ միջահասակ մի կին:

Քիչ անց՝ երբ գուրս եկայ, ես տեսայ, որ բակի հին ընկուզենու տակ գորգ էին փուել: Երեցը, թինկ տալով ծառի ցողունին, ինձ էր սպասում:

Նա հրաւերեց նստել իր աջ կողքին:

Քիչ յետոյ եկաւ տիրուհին էւ, ու նստեց մեզնից քիչ հեռու:

Տիրուհին չէր խօսում, այլ վլխակապիտակից շարունակ ինձ էր նայում, և դիակի զլխին նստած պա-

ուաւի պէս, հառաջում էր և օրօրում գլուխը:
— Ախր ասա, որդի, ուրէ Քարեգինը, (իրանց որդին), ինչի քեզ հետ հայրենիք չեկաւ, աղօթելով, ծոմ պահելով հոգիս դուրս եկաւ. Ո՞ր մեղքի համար ենք էս ծանր պատիժը քաշում, սա, որ երկունքով է աշխարհ բերել, ես, որ տանջանքով եմ պահել:

Այդ միջոցին էր, որ ականջիս դիպաւ զուսպ, բայց ուժեղ, փղձկանք:

Տիրուհին էր, այդ մէջքից կորացած, կմաղքի պէս նիհար՝ փոքրիկ կինը:

Նա կրծքին սեղմել էր որդու նամակը և մղկտալով հեկեկում...

Խեղճ մայրեր...

Ահագին ճիգ էր հարկաւոր թափել, մինչև որ կարողացայ երկուսին էլ համոզել, որ նրանց որդին առողջ է, ապրում է առանց կարիք, պարապում և միւսներից էլ վաղ կաւարտի, և եթէ ուզում են, որ ուրախ, առանց հոգսի լինի, թողի դրամը ժամանակին ուղարկեն:

— Ճիշտ ես ասում, որդի, բայց դէ ծնողի սիրտէ, վատին շուտ է հաւատում, լաւին՝ ուշ:

Մօտ մի ժամ տեսեց մեր զրոյցը, որի ընթացքում ես համոզուեցի, թէ ինչը առաջ նոյնքան էլ խելօք, ուշիմ մարդ էր երեցը:

Նա շարունակ հարց էր տալիս և իմ պատասխանով աշխատում որոշ գաղափար կազմել մեծ քաղաքի կեանքի, բարքերի մատին, լաւ կողմեր դովում, գատը պախարակում:

Տիրուհին, որ վազուց, որդու մասին կարեոր հարց ու փորձից յետոյ թողել էր մեղ և շարունակ մառանի մէջ, հակառակ իր հասակին, աշխոյժ ներս ու դուրս էր անում, ճաշի կանչեց:

Սենեակ մտնելով, ես մեծ գորգի վրայ վուած տե-

ապր կապոյտ սփռոց, ափերին մի քանի տեղ շարած խոր անօթներ, միջին թաշկինակի ձեռվ ծալած լաւաշներ, մէջ տեղ կաւէ ափսէ՝ միջին զանազան տեսակի կանաչի:

Երեցը բաղմեց սեղանի ծայրին, փոքրիկ դօշակի վրայ, իսկ տիրուհին ծալապատիկ՝ նրանից փոքր ինչ հեռու:

Սպասաւորում էր նոյն բոփիկ, երիտասարդ կինը, որ քիչ առաջ ձեռքիս ջուր էր ածում:

Երեցն իսկոյն գործի գլուխը: Առնելով օղու շիշը, նա, ըստ սովորոյթի՝ ուզեց առաջին անգամ լցնել իմ բաժակը:

Ես մերժեցի, յայտնելով, որ երբէք խմիչք չեմ գործածում: Նա ստիպել չուզեց, և տէր—հօր, ուամիկ մարդու այդ վարմունքը ինձ շատ դուր եկաւ, հակառակ շատերի, որոնք «փաստեր» մէջ բերելով, աշխատում են համոզել, որ մի բաժակ գինին ճաշից առաջ կարեոր է, բայց որի կարիքը մինչև այսօր չեմ հասկացել...

Առաջին բաժակը, որ այնպիսի եռանդով կոնծեց երեցը՝ նուիրեց մեզ, ինձ և իր որդուն, օրնելով գրավար, աշխարհիկ լեզուների տարօրինակ խառնուրդով:

Որից յետոյ յափշտակեց հացի մի մեծ պատառ, հետը մի փունջ կանաչի՝ և խոթեց բերանը:

Նա ուտում էր այնպիսի ախորժակով, և ամեն անգամ բերանը պատառ տանելիս այնքան զովում, որ շուտով վարակեց եւ ինձ, մանաւանդ, երբ հանդէս եկաւ բայցանի «չխթման», որի հոտը, գեռ բակում խօսելիս՝ բորբոքում էր իմ առանց այն էլ ուտելու մեծ պահանջը:

Որբան հոգիս կարօտ էր հայրենի լեռների շքեղ տեսքին, որոնց այնպիսի փափագով երազել եմ օտար երկնքի տակ, և որոնց ամեն անգամ մթնշաղին դիտելիս ինձ դանդաղ պատել է որքան խորունկ, նոյնքան

ախորժելի թախիծ՝ նոյնքան մարմինս կարօտ էր կովկասի զով, և շո օղին, նրա թարմ, համեղ ուտեստին, որոնցով այնքան հարուստ է հարաւը, և այնքան աղքատ՝ հիւսիսը:

Դէպքը եկել էր, և ես աշխատում էի առաւ ճաշակել այն բարիքները, որոնցից ես ելի զուրկ պէտք է լինէի մի քանի տարի:

Ինչ արատ, ինչ արժանիք էլ վնի, մարդ գինովի ժամանակ դուրս է հանում բոլորը: Նոյն պատահեց և տէրհօր հետ, Բանից դուրս եկաւ, որ նա վերին աստիճանի ուրախ, աշխոյժ մարդ էր, որի ծաղրին, կատակին նիւթ էին տալիս մի կողմից տիրուհին, միւս կողմից բակի բոլոր կենդանիքը... այնպէս որ, թէ կուշտ ուտում էի, և թէ կուշտ ծիծաղում:

Թէ որքան էր տւել այդ ճաշը, չեմ կարող ասել ընթերցող, բայց երբ վերջում փորձ արի վեր կենու սեղանից՝ հասկացայ որ այս անգամ մարմնիս քաշ աւելացել է զգալի շափով, որին նոյն խոկ յաղթելու համար պէտք եղաւ որոշ ճիգ թափեր Գնացի պառկեցի ընկուղենու տակ, ու քիչ յետոյ կարծես մարեցի հովի անուշ փայտայնքի տակ...

* *

Արդէն երեկոյ էր:

Արել սուզվում էր արջակայ լեռների քամակին, երբ ես դուրս եկայ զիւղ, կատարելու իմ ուխտը, խոստացած այն օրը, երբ նրա աճիւնը թաղեցինք այստեղ:

Նա բոլորովին մենակ, որբ երիտասարդ էր, չունէր ոչ ծնող, ոչ հարազատ, բացի մի քանի մտերիմ ընկերոներից...

Աշխատեցինք ամեն կերպ փրկել նրան կորստից, այնքան ջահէլ հասակում, այնպիսի առավառնքով մեռնող, իր ծաղիկ իղձերի այնպիսի ցնորքով ապրել փափառին այդ հոգուն...

Յիշում եմ այն սոսկալի տաղնապը երբ նա, այն իենդանի կմաղքը, պէտք է հանգչէր ճրաքի կապոյտ բոցով, մի ժամանակ կաղնու ցողունի պէս այն կարծր մարմինը, որից մնացել էր ոսկորներից կված ցամաք կազին: Կարծես հսկայ մի սարդ, տարիների ընթացքում ծծել, քամել էր նրա սրտի հիւթը:

Ո՛չ ոք, ոչինչ չը փրկեց նրան մահից... ոչ դեղ, ոչ օղը, և ոչ էլ անձնուրաց ինամբ: Դեռ մինչև այսօր էլ աչքիս առջեն է, մարմնով դիակ, բայց հոգով այդ կենդանի կմաղքը...

Նրա աչքերը, իրենց միջի այն վայրենի բոցով, որ ես դիտել եմ կանգնած նրա մահիմի կողքին, լուռ սարսափով, Ա՛խ, այդ մեռնող, բայց ապրել երազող երիտասարդ հիւանդի վայրենի հայացքը...

Զարհուրելի է...

Մինչև վերջին ակնթարթ չը պղտորուեց նրա միտքը:

Նա ինքը սեփական աչքով տեսնում էր, թէ ինչպէս առկայծում, և դանդաղ հանգչում էր իր աստղի վերջին ցոլքը... սեփական ականջով լսում, թէ ինչպէս չը լարած ժամացոյցի պէս ամեն ակնթարթ դադարում էր բարախելուց՝ իր սիրտը...

Վերջին ըսպէն էր...

Մի կերպ ահագին ճիգ թափելով, նա փոքր ինչ բարձրացաւ տեղից... հենւելով աջ թիկունքին, նա ձըս գեց ողբալի հայացք իր զիմաց զլիկոր արցունք թափց ողբալի հայացք իր զիմաց իր վերջին իղձը... փող ընկերների գէմըն՝ և կտակեց իր վերջին իղձը...

— Ես հանգչում եմ... կատարեցէր իմ վերջին ուխտը...

«Թաղեցէք ինձ այնտեղ, այն մենաւոր, մեկուսի, աճող բարդենու տակին... ծնող, հարազատ չունիմ, թնդնա սպայ ամեն ժամանակ իմ որբ շիրիմիլ...»:

Ասաց՝ և սրտի խորքից արձակեց մի խուլ ճիչ:

Մենք սարսափեցինք, զդացինք, որ այնտեղ, նրա սրտի խորքում փուլ եկաւ մի խարխուլ, բայց հսկայ շէնք, որի խուլ որոտն էր, որ դիպաւ մեր ականջին...

«Ամեն գարունքին, մահւան տարեդարձիս այցելէք իմ որբ շիրիմը... ցանկով կը պատէք այն, թող ոչ ոք չը տրորի իմ տապանը... մահից յետոյ էլ ես ապրել կուզեմ...», ասում էր նա, ամեն անգամ, երբ գալիս, նստում էր այն հպարտ եղենու տակին, և մայր իջնող արեի ծիրանի խաղով դիտում իր արբունքի մահը:

«Յանեցէք այնտեղ. վարդի, ծաղկի թփեր... թող ծաղիկներիս շքեղ տեսքով աճեն իմ մեռնող իղձերը... նրանք են, որ պէտքէ հիւսեն չքնաղ փունջով թօշնած կեանքիս պսակը»:

Խնամեցէք նրանց... մահից յետոյ էլ ապրել եմ ուզում, փլատակ սրտիս այն ծաղիկների սգաւոր փունջով։

Գերեզմանիս ցուրա, գրկի մէջ էլ ես ապրել կուզեմ... ապրել, կոյս իզձերիս ծաղիկների կեանքնվ»։

Յիշում եմ ու սարսափում...»

Միթէ վերջին ժամին այդքան կանչնվ, այդպէս խորին կակիծով ենք թողնում այս իրօք տանջանքի կղզին։

Յիշում եմ այդ պատկերը, և անգամ յիշելիս՝ ճակատիս ցուրտ քրտինք է պատում։

Գալիս, աշքիս առաջ է կանգնում այն մահիճը... նրա մէջի այն խօսող կմախքը... և ականջիս դիպչում նրա ձայնի այն ազդու զօղանջը, որ ամայի հոգուս մէջ արձագանք տալով՝ համակում է ինձ սե՛, աշնան գիշերի պէս մի սկ թախիծով։

Եւ այն հայեացը, որ իր բոցով կարծես ճգնում էր բռնկել, հրդէնել ինձ։

Խնչքան ազդու հրապուրիչ էր նա թօռում... նրանք կակիծով էր նաև պատկերացնում մոխրի, փլատակների տակից ծխող իր սիրտը, իր հոգին։

Սրա լեզուն թունաւոր կնճիթ էր, որ ամեն իսուքի հետ խոցում էր մեր սիրտը, ու սրնկում այնանեղ թոյնի մը կաթիլ։

Ցաւից մեր աչքի մէջ ցամաքել էր նոյնինկ արցունքը։

Չգում էր որ իր կեանքըց մացել է ընդամենը մի ժամ... և այդ կարձ միջոցում նա ճգնում էր ապրել իր ամբողջ կեանքը։

Ինչպիսի սև գոյներով էր նկարագրում իր հոգին, նախկին այդ արգաւանդ երկիրը, ուր չէր կանաչում յոյսերի, ձգտութերի էլ ոչ մի ծաղիկ... ուր արդէն ձմեռն էր իշխում, ոռնում բուքը... որի երկինքը լաւար էր ինչպէս ծով, ուր չէր ծագում, իղձերի ոչ մի աստղիկ։

Այս, յիշում եմ և անգամ յիշելիս ճակատիս ցուրտ քրտինք է պատում։

Արևմուտքում, դիմացին լեռան քամակին, սաթի ցինջ, պայծառ գոյնով փայլում էր մի երիզ, որ ինձ այնքան յիշեցնում էր այն ժապաւէնը, որ լուսընկայ գիշերին, կանթեղի գոյնով, խաղում է ծովի ծփուն կըծքին։

Չը կային վերջալոյսի այն ճով գոյները, որ ուրիշ անգամ հմայում է դիտողի հոգին։

Մինչդեռ արևելքում երկինքը շառագունել էր վարնի, քնքուշ թերթիկով, որ հետզինետէ փթթում էր դրօշակի գոյներով, իսկ յետոյ կամաց-կամաց հալվում լեշակի ամբիծ, կանգնոյտ փայլի մէջ. այդ փայլն էր, որ այժմ թանձրանում, դառնում էր սկ ծուխ, և իր ալիքներով ծածկուն արևելքը, իսկ յետոյ նուաճում ամբողջ երկինքը։

Ոչ մի հմուտ դիտողութիւն չէր կարող որոշել, թէ ինչ գծի կողքին էր հալվում կարմիր բոցը, և որտեղից ոկավում կապոյտ գոյնի երիզը։

Զէր անցել հինգ ըռպէտ, և ահա այդ չքնաղ տես-
սիլքը եղծուեց ինչպէս մի երազ:

Կարծես մի գոեհիկ ձեռք էր, որ ներկարարի վըր-
ձինի թանձը շաղախով ջնջեց այդ գողարիկ պատկերը:

Եւ այդ իսկ ժամին էր, որ սենեակի մութ անկիւ-
նում ընկած, և իր ցօլքով հէնց իր տեղը մատնող գո-
հարի պէս, արևելքում շողաց մի շքեղ աստղ:

Մի բարձր ժայռի ընդարձակ ստորոտում գտնվում
էր գիւղի հանգիստը, հսկայ ծառերի խիտ կամարների
տակ:

Նրա շիրիմը ընկած էր բոլորովին մեկուսի, այն
դարաւոր եղնուու թևերի տակ... նոյն այդ շիրիմի պէս
որբ ու մենաւոր:

Արդէն մթնում էր:
Երկիրը հետզիետէ ընկղմում էր խաւարի մէջ: Կար-
ծես հսկայ մի ջահ, որ ամենուրէք պայծառ լոյս էր
արձակում, հետզիետէ առկայծելով հանգչում էր:

Թւում էր, որ հեռու, լեռների քամակին ծխում
էր վիթխարի խարոյկ, որի սև, ալիքները սողալով քօ-
ղարկում էին երկնքի ժիաը... Նստած եմ նրա, քարից
թափուր, որը շիրիմի կողքին, որի կրծքին արդէն աճել
էին վայրի ծաղիկներ, որոնք, բարակ շրթունքներին
ափսոսանքի ժպիտ, գլխիկոր սգում էին այն հողի վեր-
մակի տակ ննջողի վաղաժամ կորուստը:

Խեղա ընկեր...

Ինչպիսի հմայքով այժմ փթթել, ծաղկել է քո
կտակը!...

Զէ որ հոգևարքի մէջ դու կտակեցիր, որ բեզ հետ
թաղեն նաև վարդի տունկեր, որ գարունքին, երբ այն
ջերմ բուրմունքով երկիրը կը թօթափի սրտի սասցէ
պատանքը՝ դռւ և ևս ապրես կրծքիդ միջից աճող ծա-
եիկների այն կերպարանքով:

Եւ այսօր, երբ այնպէս շքեղ փթթել է քո կը-
տակը, արդեօք զ՞ն քո վիճակից, զ՞ն ես որ ապրում
ես ծաղկներիդ տենչանքով, նրանց երազով:

Գ՞ն ես, երբ այսօր, շիրիմիդ միջից, ծաղկների
տեսքով զարդանում են սրտիդ այն ճոխ, բայց այսօր
թառամած յոյսերը... և քամու հեկեկանքով ողբում քո
հանգած երազը:

Գ՞ն ես, քո վիճակից, իմ ոժբախտ ընկեր:

Պէտքէ մեկնէի...

Կասարել էի իմ ուխտը... ևս չոգեցի և համբու-
րեցի նրա գլխի փոքրիկ քարը:

Փոքրիկ, կլոր լուսինը, կանթեղի դեղին, կապոյտ
ցօլքով ողողել էր գլւղը, որ թուխսի պէս, թևերի տակ
պատուպարել էր կարծես իր ձագերին:

Շրջակայրի ամեն առարկայ, ծառ թէ տունկ՝ ձը-
գել էր գողարիկ ստուէր: Ոչ գիւղից և ոչ էլ ճանա-
պարհին չէր լսվում ոչ մի աղմուկ, կեանքի այդ միակ
վկան, որ ներշնչում է մարդուն ապրելու, գործելու
այնպիսի եռանդ:

Ի՞նձ, տենգին, ժխորին սովոր քաղաքացուս կար-
ծես աքսորել էին այն կղզին, ուր լուսթեան կերպա-
րանքով ման էր իշխում:

Եւ շրջակայրի այդ լուս սարսափնէր, որ կառափի
տեսքով ինձ էր հաւածում:

Ինչից էր, արդեօք, նրանից, որ իմ մէջ զարթնեց
աղէտների մէջ իմաստ որոնող հին մարդը, և ստիպեց
գոնէ երգելով ստեղծել որևէ աղմուկ այս մեռած շրը-
ջակայրում:

Կէս գիշեր էր, երբ հիւրընկալ քահանային միւս
օրը նորհակալութիւն յայտնելով՝ վերադարձայ քաղաք
և գնացք նստելով տեսրուեցի Անի:

Սկզբում, ուզեցի սայլ վարձել, որպէսի գոնէ մի՛ օր, մի՛ զիշեր ապրել ընութեան ընդարձակ ծոցում, ճաշակել արև գեղարուեստական հաճոյքը, որին այնքան փափագում է հոգսերի լծի և ներկայ լուսաւոր դարի կապանքերի տակ տնքող քաղաքացու գերի հոգին:

Բայց հնձի, ուրեմն աշխատանքի տենդու ժամանակն էր, երբ գիւղացու զբաստին սպասում է այնքան անելիք՝ պահանջեցին այնպիսի վարձ, որ բոլորովին մեղանչում էր իր աշխատանքով ապրող ուսանողի չըառ գրպանին:

Շըջակայքում իշել էր այնպիսի խաւար, որ խա-
փանել էր լոյսի ամեն ցօլը, որի միջից մի կործանիչ
ոգի ասես երկնում էր աղէտ նիւթել խրճիթներում
անհոգ քնած բամիկների գլխին:

Դողով սպասում էի, թէ այդ ամայի լուռթեան մի-
ջից յանկարծ որոտ կը ճայթի, որ շրջապատի վիթխարե-
սարերից մինը կը ճեղքուի ընկոյզի պէս՝ դուրս ժայթ-
քելով ծուխ ու բոց, կը ծագի տիեզերքում թափառող
երկու հզօր մարմինների ահեղ ընդհարում, որը կը թա-
ղի իր փլատակների տակ ամեն ինչ:

Բայց երբ ըլջակայթի այդ սարսափի մէջ ուն եր-
կնքից փայլող ու կորչող աստղի պէս յանկարծ բըռ-
նկում ու հանգչում էր լոյսի մի ցոկը՝ ինձ այդ էր
միսիթարում:

Երկու ժամ անց՝ հասանք Անի կայարանը։
Ուշ գլուխը էր։ Թէև շրջակայքում չի սպառնում
ոչ մի վտանգ, բայց ոչ մի ուղեոր այդ ժամին չի
վստահանում շարունակել ուղին, քանի որ յաճախակի
եթեկակութիւն չը լինելով՝ չը կայ ոչ սայլի և ոչել ոտ-
քի կարգին ճանապարհ։ Խամ ուղեորը կարող է ընկնե-
արտերի խորթու բորթ ակօների մէջ՝ և, ինչպէս ճան-

ՃՐ ՈՍՏԱՅՆԻ մԷջ, կը թափառի մինչև լոյս

Գերադասեցի սպասել կայարանում։ Որոշելով լուսածաղին սայլ վարձել, ևս պառկեցի երկար նստարաններից մէկի վրայ, հանգիստ ընծայելու յագնածոքնի սասակիկ կարօտ մարմնիս,

Թէ սրբան էր անցել, չեմ յիշում, բայց յանկարծ երկար, մի սուր ճիչ ստիպեց վեր ցատկել և խելազարի պղառը հայել շրջապատիս:

Մօս մի քանի վայրկեան, սարսափի տակ, ապուշի պէս նայում էի զբջոպատիս, և չէի կարողանում յիշել՝ ուր և ինչ նպատակով ե եկիւ:

Բայց եթք ներսում նկատեցի ձեռքներին թիթեղի թէյնց, աղէտի ժամանակ ընից փախչող մրջումների պէս՝ դէս ու դէն վազող մարդկանց՝ նոր միայն պարզուեղ աղտօռ միտքս:

Դաւագ պղտոր սլուք։
Դրսից եղեռում էր նոսր ծուխի գոյնով երկինքը։
Արդէն լուսանում էր։ Դուքս եկայ մայթ, որի
համար առաջ առմէջի պէս տնքում էր գնացքը։

ծայրին ծանր բեռ քաշող գոսչը մէտ առքուն է և յէլ
Փշում էր վերին սատիճանի պաղ քամի, որ թա-
փանցելով նոյն իսկ վերմակի պէս հաստ վերաբերում
ստիպում էր սառնամանիքի տակ ընկած որբի պէս,
առամ առամբ զարկել...

Ի՞նչ կը լինէր իմ հալը, եթէ արհամանէի ծերունի
հօրու խըստը, և չը վերցնէի այս վերաբկուն, որ այժմ
գիտառատ մօր գրկի պէս պաշտպանում էր ինձ: Մինչ
ես բողոքում էի, որ մէջքիս աւելորդ բեռ են բարգում:

Այդ միջոցին ես նկատեցի, որ մայթի վրայ զրու-
նում էր շիկամօրուս, կարճահասակ ճակատին կոկար-
դով մի մարդ: Ենթազրելով, որ նա կայարանի ծառայ-
ող է, մօտեցայ և ոռւռերէն հարցըի, թէ երբ են սայ-
ւեր գալիս և ինչ գնովեն Անի տաճում:

— Հայ Ես, դարձաւ նա սպասածիս հակառակ
եղակի դէմքով, խուսափելով բուն պատասխանից—եթէ

այսպէս է, արի դեռ խանութ օղի կոնծենք, մաղթենք
և ազգայ երկար կեանք...

«Հայ մարդ» ես Անի «ուխտի» ես գնում:
Ես ապշեցի:

Սյալիսի տարօրնակ վերաբերմունք այն մարդուց,
որ առաջին անգամ էի հանդիպում, չէի կարող սպասել:

Ես մի անգամ էլ չափեցի խօսակցիս ոտից մինչև
գլուխ... ոչինչ արտաքինով բոլորովին ինտելիգենտ
մարդու տեսք ունէր... մանաւանդ, որ խօսում էր ըն-
տիր ոճով:

— Դողում ես, բարեկամ, մի տես ի՞նչպէս ոզնու
ձեռվ փաթաթուել է մուշտակի մէջ:

Եւ առանց սպասելու պատասխանիս՝ նա դըկեց
թիս առաջնորդեց դէպի պանդոկ:

Ես չը մերժեցի: Գուշակելով, որ արդէն գտել եմ
ճանապարհի ուրախ ընկեր, գւարճակի մի տիպ, ես ըն-
դունեցի նրա հրաւէրը: Մանաւանդ, որ ուտելու զօրեղ
պահանջը, ինձ վաղուց էր նեղում, դատարկ ստամբօս.
դա միջրադաց է, որ գուրկ աղունից, աւելի շուտ յղկում
է իր աղօրիքները, քանթէ տալիս որևէ արդիւնքը:

Ներս մտանք պանդոկ. դա մի ընդարձակ, մութ
սենեակ էր: Առաստաղից կախած ահազին ճրագը, թէն
աղօտ լոյս էր արձակում, բայց սփոռում էր ախորժելի
ջերմութիւն:

— Սպա, մի նստիր, չէ այստեղ, ուղիղ դիմացիս,
ասաց նա ընտրելով մութ անկիւնում մի սեղան: Կան-
չեց ծառային, և արագ թուելով, պատուիրեց մի շիշ
օղի, մի չափ գինի, երկու բաժին խորտիկ և մի խա-
շած հաւ:

— Օղի, այդ մւմ համար էք պատիրում:

— Մեզ, մւմ, պատասխանեց նա, առանց նայելու
երեսիս, ի միջի այլոց, ծառայի հետ խօսելիս... էիք
պատուիրելով տեղական մի կերակուր, որի անունը,

ներեցէք, ընթերցող, չեմ կարող յիշել:

— Ես խմիչք չեմ գործ ածում, տեսէք վաղօրօք
զգուշացնում եմ:

— Զես խմում, և այն էլ ուսանող... ամօթ է... ապ-
քել Խուսաստանի կրծքում և չը կոնծել. ինչ որ պա-
տուիրեցի՝ բոլորն էլ շարի:

Ես կրկին շեշտեցի, որ մի կաթիլ անգամ չեմ խմիլ:

— Եթէ ուզում էք առանց պատակի փող վատ-
նել, թող բերի: Եւ յետոյ ի՞նչ կարիք կայ այդքան կե-
րակրի, եթէ հաւ ասիք, էլ խորտիկն ի՞նչ է:

— Դէ, ասա հաց շուտենք էլի...

— Կերէք, եղբայր, ովք է արգելում, բայց մարդու
թէ խոզի որկոր ունենք. գոնէ իմ մասին իզնուր էք այդ-
պիսի կարծիք կազմում:

— Բաս ի՞նչ կը խմէք...

— Թէյ...

— Եթէ այդպէս է, ինձ մի բաժակ սպիրտ և մի
շիշ էլ օդի տուր, որ մի քիչ ուշի գանք, թէ չէ այս
սառնամանքին մարդ կը սառչի:

— Դէ, այս բաժակով մաղթում եմ քեզ, սիրելի

Մարկոս:

— Ի՞նչ, Մարկոս... այդ մւմ էք ասում:

— Քեզ ի՞նչ կայ որ:

— Ներեցէք, ինձ Մարկոս չեն ասում, ընդհատեցի

ես հազիւ գասկելով վիրաւորանքս:

— Վա, հայ չես...

— Այս, հայ եմ, եամենեին չեն ամաչում իմ հայ
ծագումով:

— Է՛, եթէ հայ ես, մանաւանդ, որ պարծենում ես
քո ծագումով, ուրեմն չը պէտքէ ամաչես, եթէ քեզ դի-
մեն զուտ հայկական անունով:

Այդ սուր պատասխանով նա լեզուս կապեց, ուշի
գալով ասացի:

— Ախր ի՞նչու կիրակոս, Մարկոս պէտք է կոչէք,
քանի որ ունիմ սեփական անուն:

- Ծնդներ ունիս:
- Այս:
- Աշխատում են:
- Ոչ
- Եղբայր:
- Ո՞չ:
- Քոյր:
- Ես յիշեցի թիւը:
- Ուրեմն յայտնի, ազգասէր մարդու զաւակ ես:
իրաւունք ունես պարծենալ քո ծագումով: Բաս
ասում ես ծնողներդ աշխատանքի շնորքից դուրկ են:
- Ես ծիծաղեցի:
- Քո կենացը, ասաց նա և մի կումով դատար-
կեց օղու ահագին բաժակը:
- Օդին երեխ թունդ էր, որովհետեւ նրա աչքերից
դուրս ցայտեցին արցունքի մի զոյկ կաթիլ, դէմքին
տուեց դառը զեղ ընդունողի, կամ աւելի շատ թթու-
լաւաշ ուտող երեխի ծիծաղելի տեսք:
- Պահ, քաշողիդ ձեռը օրհնուի, արաղ, հալած եր-
կաթի պէս վառեց կոկորդս: — Մի տես ինչ կանաչ է,
ասաց նա շիշ բարձրացնելով, կարծես օձի թոյն լինի..
- Քեզ, հէրիք է մի բաժակ, գնդակով դիպածի
պէս կընկնես գետին:
- Ցափշտակելով խորտիկի մի խոշոր, իւղալի կտոր,
նա խոթեց բերանը, և հազիւ մի քանի ակնթարթ ծա-
մած՝ կլանեց... Եւ մինչդեռ ես ոչխարի պէս դանդաղ
որոճում էի մի փոքրիկ պատառ, նա արագ իրար ետե-
ից կլանեց ամբողջ ափսէն... Հիացմունքով դիտում էի
այդ շաղգամի պէս կարմիր հոյակապ. կենդանուն, որ
ջրի պէս գինի էր խմում, և իր կարծը աղօրիքներով
լափում կերակուրը: Նա տարիքով մարդ էր, բայց խը-
միչքը նոյն իսկ ժամանակի ընթացքում չէր աւերել նրա
ամուր մարմինը,

— Այ հիմի կարողենք շարունակել մեր ուղին...
թէկուզ մի օր ոտով շրջեմ՝ շալակիս ահագին բեռ: Շըր-
թունքները լիզելով նա ոտքի կանգնեց—Տղաս առաջ
ընկիր տեսնենք, Պանդոկից դուրս եկանք: Արև չը-
կար, իշխում էր աշխան գորշ եղանակի պէս մի լոյս:
Թեթև թոփչք գործելով՝ նա ցատկեց մայթից, և կըտ-
րելով երկաթէ ուղին, բռնեց այն շաւիղը, որ միւս
ափին գալարւում էր բլրի կրծքին:

— Այդ հւը, հայրիկ...

Այդպէս դիմեցի, որովհետեւ չը գտայ աւելի տեղին
անուն, չէ որ «տղաս» կանչելով, նա արդէն ինձ իր
որդին էր շինել:

— Անի, կարճ առանց յետ նայելով, նոյնիսկ ա-
ռանց նշանակութիւն տալու զարմանքիս՝ պատասխանից
նա...

— Ոտնվ...

— Բաս գլխով...

Ես փոթկացի, գսպելով ինձ, վագեցի, և թերիս քա-
շելով հարցրի:

— Բա սայլի չսպասե՞նք:

Նա դէմքիս սկեռեց իր խոշոր կարծես արցունքից
կարմիր աչքերը... նա հարբած էր. մի չարէք գինի և
երեք խոշոր բաժակով օղի, իր ասելով «էշխա-ով էր»
Բայց իրան բոլորովին զգաստ էր պահում, քայլում էր
հաստատ, դատում էր խելացի, և եթէ մօտիկից չը-
մատնէր բերնի բուրմունքը, հեռուից չէր տալիս կաս-
կածի ոչ մի տեղիք:

— Ի՞նչ, սայլ,.. այդպիսի առողջ ոտքերով սայլ պա-
հանցել... գոնէ ինձնից ամաչցից: Ծերունին ուղիղ սըր-
տիս խփեց, նա վիրաւորեց երիտասարդիս հպարտ եսը,
եւ ճիշտ որ, սայլի ինչ կարիք կար, այն էլ այնպիսի
զով եղանակին, կանաչ դաշտում, երբ նոյնիսկ ուղեորը
իջնում է կառքից և ոտքով քայլում... մանաւանդ մինչեւ
Անի հազիւ 7 վերստ էր:

— Լաւ, բայց ճանապարհը գիտէք, հարցը ես:

— Բա սա ի՞նչ է, ճանապարհ չի, և նա, ցոյց տուեց դիմացի շատիղը, որ բարձրանում էր բլուրի թիկունքով և հակառակ կողմից իջնում:

Զգալի ցուրտ էր: Թէ բամբակով վերարկուս պատսպարում էր ինձ, բայց սառնամանքը, լոյսի ճառագայթների պէս, թափանցում էր մարմիս մէջ: Շըրթունքներս կապտել էին, քիթս և մատներս սառել կարծես քայլում էի սառուցով պատած գետնին, ուր ամեն քայլ փոխելիս՝ ոտքս կպչում էր գետնին և նորից պուկ գալիս: Տեսել էք երբեքցէ ճահճի եղերքին տղի մէջ որդեր որոնող սագին,

Իմ ուղեկիցը ամեննեին նշանակութիւն չէր տալիս ցրտին, կարծես զլջում էր տօթին. գլւարկը քաշել էր ծոծրակին, աշնան, բարակ վերարկուն գցել ձախ ուսին, ու երգելով առաջ գնում.

Հասանք բլրի գագաթը: Նա կանգ առաւ երկու անգամ ամբողջ կրծքով ներս շնչելով օդի պաղ հոսանքը, շուռ եկաւ, հենուեց կաղնու հաստ գաւազանին՝ և աչքերի մէջ հաճոյըի տիսուր ժայիտ՝ բացականչեց. «մի տես, ի՞նչ սքանչելի պատկեր է»:

Հեռու, արևելքում վաղորդեան գորշ, սպիտակ մառախողի միջից, կարծես մինչև գոտին ձիւնի մէջ չոսդած սրբագրծող քուրմ՝ բարձրանում էր վիթխարի մի լեռ, որ իր պարթե հասակով զարմանք, ոչ աւելի շուտ հաճելի սարսափ էր ծգում դիտողի սրտի մէջ:

Լեղակի ջինջ, կապոյտ փայլով ժապտում էր վճիտ արևելքը: Հը կար կարմիր, կամ դեղին գոյների ոչ մի երիզ, որ վկայէր, թէ ահա երկար, յամառ պայքարից յետոյ, շողալով իր ամբողջ փայլի մէջ, երկինք է իջնելու այն դիւցազնը, որին այնպիսի երազով, սիրող կոյսի հեզ, այնպիսի թախիծով սպասում էր իմ հոգին... ինձ գետ միասին նաև ամբողջ շրջակայքը, որ սառնամանի-

քից կարծես կուչ եկած մողէսի պէս իր մաշկի մէջ՝ սպասում էր նրա մեղկ փաղաքշանքին, որ տաք հոսանքով խաղում է մարդու երակների մէջ, ու սթափեցնում իղձերի, յոյզերի մի ամբողջ մառախուղ:

Նայեցի դիմացի լեռան նաև հոյակապ բարձունքին և գեղարւեստական ուժեղ զգացմունքից քարացայ... կարծես մի աներեսոյթ կախարդ իր գաւազանի թեթև զարկով ինձ շնեց քարի արձան... կարծես գեղարւեստի դիցունին իր ստեղծագործող ձեռքով, ձիւնի անարատ շերտերից և կանթեղի շողերից յաթական պատկեր էր հիւսել և զարդարել նրա վսեմ գագաթը:

Ամենի սարը, իր վիթխարի հասակը, բորբոքվում սքանչելի ցոլքերով, ի՞նչպէս արևի տակ ընկած հսկած հսկայ գոհար:

Իսկ լեռների ամբողջ շղթան՝ ի՞նչպէս մարտից յաղթանակով եկած ալեոր դիւցազնի որդիք, կարծես ծունկ էին չոքել և սպասում իրանց ծնողի մաղթանքին:

— Ի՞նչպէս է այս դիմացի լեռան անունը, դիւցիցի ուղեկցիս, որ նախկին դիրքով, աչքերի մէջ նոյն հաճոյքի սառած ժայիտը՝ նայում էր դէպի արևելք:

— Մասիս...

— Մասիս... գոչեցի ես, խուլ արձագանքով: Նա էր, պատմական Մասիսը, որ պյուր, յուսահատ, աշխարհի վայելքներից խուսափող ճանաւորի պէս, թաղել էր սրբունքների տակ իր նախկին փառքը, և աղօթում բարձրեալին, որ գոնէ իր գաւակներին պարզեի ստեղծագործող աշխատանք, խաղաղ կեանք... Հոչակաւոր Մասիսը, իր կրասեր եղաօր հետ, որին նա կարծես անթարթ հսկում, պաշտպանում է փորձանքից, մի ի՞նչւոր խարդախ գեղեցկունու նենգ աչքերի, հոլանի կրծքի մեղկ հրապուրներից:

— Նայեր, դէպի հարաւ, դիմեց ինձ ուղեկիցս, տեսնում ես այն կարծես սկզբանի առաջ առաջաստ

մտնող փեսին, որ զլիխին արքայական քառալսաչ թագ ունի, դա Արագածն է, մեր լեռների մէջ առաջին, զառառամեալ նահապետը, ձիւնի պէս ճերմակ ալիքներով, թանձր մօրուքով... նայում և օրինում է իր երկու պարծանք զաւակներին, ծածուկ հրճւում սրտի խորքում, որ իրանից յետոյ, գահին ու ժողովրդին պէտք է կտակի այդպիսի ժառանգներ...

Անցել էր մօտ կէս ժամ... Եւ ահա արևելեան կամարը նախ դժգունեց, իսկ յետոյ շիկնեց ինչպէս մեղսալի երազ տեսնող, անարատ հոգով մի կոյս, որ յանկարծ սիրած երիտասարդի գրկում ընդունում է կրքի անդրանիկ համբոյրը... Եւ նա շառագունում է հաճոյքից, վախից, ամօթից... Զէր անցել քառորդ ժամ, երբ յանկարծ թնդանօթից արձակած բոցավառ գնդի պէս, դողդողալով, կարծես լոյսի արագութեամբ երկիր սլացող և ճանապարհին ամեն ինչ խորտակելով դուրս թռաւ արևի վարդագոյն սկաւառակը... Կարծես երկնքում բռնկեց հսկայ հրդեհ, որից մի բոց ընկնելով երկիր, բորբոքեց անտառը, որ իր հերթին վարակելով դիմացի բլուրների կանաչը՝ սկսեց ճարակել ամբողջ շրջակայքը։
Երկրիս երեսին էլ ծագեց նոյնպիսի հրդեհ, որի ալիքների մէջ կորաւ ամեն ինչ...

Եւ ինձ հեռւից այնպէս էր թւում, թէ՝ բոցավառվում էր Մասիսի, Արագածի փարթամ ծառաստանը որոնց մէջքին, իժերի պէս, բաց երախներով, գալարվում էին վիթխարի բոցեր, որից նրանք բորբոքում էին ինչպէս չոր փայտից կազմած երկու հսկայ խսրոյկ։

— Տեսնում էր, ինչ սքանչելի պատկեր է մեր առաջ. անացի ես ուղեկցիս, իզուր չէին մեր նախնիքը մի ժամանակ պաշտում, խնկարկում այս սարերին, այնպիսի ջերմ հաւատով. գեղեցկութեան գաղափարի այս կուռքերին, ինչպէս նրանք խոր են ըմբռնել գեղեցկութեան միխթառդ, ազդու նշանակութիւնը. իսկ մենք, որ շատ անգամ

պարծենում ենք մեր խելքով, ազնիւ ճաշակով, և յաճախ ամաչում, խոստովանելու, որ մենք ենք նրանց սերունդը, մենք, քաղաքակիրթ որդիքս, որքան վայրենի, նոյնիսկ կոյր ենք զգալու, հասկանալու սրանց հմայքը։

— Ո՞վ սպանեց մեր մէջ գեղեցկութիւն պաշտողի այդ ազատ, հպարտ հոգին, ով զրա փոխարէն մեր մէջ ստեղծեց գեղարուեստի թշնամի, բնութեան հրաշալիք աւերող, և սիրոյ յուզմունք խեղդող այս ստրուկ հոգին։

— Այնպիսի համոզմունքով ես խօսում, որ քիչ է մնում մզուանամ կենդանի Աստծուն, և նորից կուռք պաշտեմ... շտապիր ժամ առաջ տեղ հասնենք, թէ չէ կէս ժամ յետոյ արևը կըսկի այնպէս կծոտել, որ կըստիպի նախ վերաբկուն հանել, յետոյ բաճկոն, խալաթ, շապիկ՝ մինչեւ Ողամի հագուստով Անի հասնենք։

Ես բարտօք համարեցի հետեւիլ նրա խորհրդին։ Երբ իջանք բլուրի գագաթից և սկսեցինք բարձրանալ առաջներիս դարիվերով՝ արեն արդէն բաւականին չուել էր դէպի հարաւ, որի չերմութիւնը սկզբում մեղ խիստ դուր էր գալիս, բայց երբ սկսեցինք մէջքից կուացած մազոցել գարիվերով, նա այս անգամ սկսեց վառել մեր թիկունքը։

Այդ միջոցին էր, որ ուղեկիցս, չը գիտեմ ինչ նըպատակով, յանկարծ յետ նայեցու բացականչեց։

— Է՞ս ով է...։

— Ո՞վ, յանկարծ սթափուելով մտածմունքից և մի փոքր շփոթուելով նրա հարցից, ասացի ես՝ նայելով նրա զարմացած դէմքին։

— Այ, չես տեսնում... և նա ցոյց տուեց ինձնից քիչ հեռու կանգնած փարախի ահագին բրդոտ, և շուն՝ որ շոգից լեզուն հանած, պոչը կախ՝ ակնածելով և մի տեսակ գաղտնի երկիւղով մեջ էր նայում։

— Հարցըու, տես, ով է, և ինչ է ուզում։

— Ինչու էք թարգմանի օգնութեամբ խօսում, գիմեցէք ուղակի իրան։

— Մօտ արի, մօտ, պանդուխտ եղբայր, տեսնենք, ինչ հոգս ունես... ապուշ, ինչ ես փախչում, հօ չեմ թակում, «Եկայք առիս ամենայն քաղցեալը... և ես կերակրեցից զձեզ»: Ու թաշկինակից հանելով մի կտոր հաց, կիսեց, մի կտորը ձգեց շան առաջ, իսկ միւսը իր բերանը:

— Խեղճ մի տես՝ փորը ուղակի կողերին է կպել: Տօ, անիրաւ, ես դեռ չեմ ծամել դու արդէն կլանեցիր... ի՞նչ ես կարծում, ո՞րնէ աւելի վարձք, սրան կերակրելը, թէ գանձակ ձգելը... կեր, կեր, հալալէ, հօ չի ուտում, կլանում է, ատամների պաշտօնն էլ ստամոքսն է կատարում... ստամոքսի խանգարում չըստանայ, այ տղայ:

Ծիծաղից ուղակի շորի պէս փափկել էի, տեսնելով ուղեկցիս տարօրինակ արարքները, որ խօսելու ձիրքից դուրկ կենդանու հետ սկսել էր զրոյց անել, հարցեր առաջարկել ու նրա տեղ պատասխանել:

— Դէ հերիք, ինչքան ուտես, գնանք, ասաց նա և ձեռքով հասկացրեց շանը, որ հետեի իրան... որքան մեծ էր իմ զարմանքը, երբ խելօք կենդանին, ընտելանալով իր տարօրինակ բարեգործին՝ հնագանդուեց նրա կամքին... միւս կողմից նա բոլորովին մոռացել էր ինձ, և խօսում ու վիճում իր նոր ուղեկցի հետ.

— Բայց սպասիր, յանկարծ նա կանգնեց ճանապարհի կէսին կարնոր գործ յիշող մարդու պէս, ախր մենք իրար չենք ճանաշում, ախր ես չը գիտեմ, թէ ում հետ պատիւ ունենք խօսելու, կարգը պահանջում է, որ ես նախ կատարեմ իմ պարտքը, ասաց նա և կռացտւ, սկսեց որնտղել շան պոչի տակի այն գաղտնիքը, որին ամեն բանական արարած խնամքով ծածկում է օտար աչքերից: Սեռը ստուգելու նպատակով:

— Պարոն է, բացականչեց նա գիւտ անող մարդու ձայնով, յետոյ (երեխ նկատեց կանկածի տեղիք) հարեցի

— Զէ, տիկին է... պէտք է վերին աստիճանի քաղաքավարի վարւել: Բայց սա, ինչպէս տեսնում եմ, ոչ տիկնոջ կերպարանք, և ոչ էլ քայլեածք է մանաւանդ, որ ինձ հետ խօսելիս, իրան կորցնում է:

— Ախ, այս ինչ եմ տեսնում, միթէ կուրացել եմ, ի՞նչպէս օրիորդին, այն էլ այսպիսի հասակում տիկնոջ տեղ եմ ընդունել, լաւ է որ այդպիսի անունով ոչ մի անգամ չեմ դիմել, կարող էր նախատել ինձ, պէտք է մի քիչ շոյել:

Մինչ համը կենդանին կասկածով որսում էր նրա ձեռքերի իւրաքանչիւր շարժումը: Որ նա վախենում էր, դրանում չէր կարող լինել ոչ մի կասկած. նրա այդ վիճակը կարող էր ամեն տեսնող գուշակել շարունակախածում պոչից, մանաւանդ, որ նա աշխատում էր պահել վերին աստիճանի կորրէկտ: Այսպէս շան հետ խօսելով՝ հասանք մի տեղ, ուր ուղին բաժանվում էր երեք ճիւղի. մէկը տանում էր դէպի աջ, միւս դէպի ձախ, իսկ միջինը բարձրանում էր փոքրիկ բարձրավանդակի կրծքով, և հակառակ կողմից իջնելով, բոլորովին աչքից կորչում: Մենք տարեկուսեցինք, չիմամացանք ուր դիմել, արդեօք, դէպի աջ, ձախ, թէ շամացանք մեր կիմենք, նայեցի շրջապատիս. ամրունակել մեր կին ընթացքը. նայեցի շրջապատիս. ամրող տափարակում, որ աչքիս առաջ տարածվում էր ինչպէս տօթին, հազիւ ծփող ծով՝ չէր երկում մարդական կառավարութիւնը: Արևելքում գլուխ շաքարի տեսքով կապոյտ և սպիտակ գոյների անարատ խառնուրդով կողմից էին մի կողմից հոյակապ Մասիսը, իսկ միւս շողզողում էին մի կողմից հոյակապ Մասիսը՝ ոսկու դեղին մառախուղի մէջ: Կողմից շընաղ Արագածը՝ ոսկու դեղին մառախուղի մէջ:

— Այժմ աջ թէ ձախ դիմենք, հարցը ուղեկցիս՝ որ կըկին հենւած իր գաւազանին նայում էր հիաց-մունքով դէպի արևելք:

— Ուր, որ կուղես, մի վախիլ չես կորչիլ, երկիրը դնդի ձև ունի:

— Հաւ էք ասում, բայց ոչ միտք և ոչ էլ միջոց ունեմ այժմ պարզ գործելու երկրի շուրջը:

Հարցը ու օրիորդին, տես ինչ խորհուրդ է տա-
լիս Նա յետ Նայեց, և երբ նկատեց, որ իր կողքին
բացի ինձնից ոչ ոք չը կայ, իրան բոլորովմին կորցրեց
զարմանքից։ Ես չը կարողացայ զսպել ինձ, և արձակեցի
ամբողջ թռքերիս ուժով լի բրբե՞ցի, վկայ լինելով՝ նրա
խենթ արարքներին։ Ակսել էր որոնել, կանչել «օրիոր-
դին», ինչպէս մի մայր, որ ճշալով, սարսափից ցամաք աշ-
քերով որոնում է ամբոխի մէջ իր կողած զաւակին։ Եւ նրա
կոչը առանց արձագանքի չը ֆնաց՝ չէր անցել մի քանի
ըովէ, և ահա մէկ էլ տեսանք, որ բլրի միւս կողմից
հևալով, աչքերի մէջ ուրախութեան ժպիտ, դէպի մեզ
էր ալանում «օրիորդը»... որին ուղեկիցը դիմաւորեց
առանձին հրձուանքով. մեզ հասնելով ուղակի ընկաւ իր
գթառատ տիրոջ ոտքերի տակ, սկսեց կլաւել, քծնել,
որի ընթացքում նա մերկացրեց փորի այն տեղը, որի
դէմ այնպէս ուժգին բողոքում է մեր աչքը։

— Անամօթ, վեր կաց, վեր, դու ինձ բոլորովին խայտառակեցիր. այդքան ես գնահատում քո արժանիքը, որ առաջին պատահող մարդուն սէր ես խոստվանում,
— Բայ ուր գնանք է, ի՞նչ խորհուրդ էք տալիս
օրիորդ։

Զը զիտեմ ինչու, նա, որ ինձ հետ միշտ եղակի էր խօսում, այս անգամ դարձաւ «օրիորդին» յոզնակի դէմքով։

— Դու, չը գիտես, ես չը գիտեմ, նա չը գիտէ,
շաբունակեց նա՝ խոնարհելով պիտեմ» բայը, բաս ով
կառաջնորդի մեզ:

— Միշտ ուղիղ, գոչեց նա քիչ յետոյ, «օրիորդ» հեանէք ինձ:

— Բայց սպասեցէք...

— Ելու մի խօսք, սաստեց նաև վազելով բլրի
գագաթից սկսեց իջնել դէպի դաշտ։

«Երեխ ծանօթ է շրջակայքին», ասացի ես խրախու-
աելով իսձ, «Թէ չէ հիւանդանոցից փախած խենթ պէտք
է լինի մարդ, որ գնայ այն ճանապարհով՝ որին բոլո-
րովին չի ճանաչում»:

Ես հետևեցի առաջնորդիս: Ու այս անգամ չէր անցել կրկին քառորդ ժամ, երբ յանկարծ աշքիս ընկաւ ծեփից զուրկ, մի ջից աւեր աշտարակի մի գլուխ. յետոյ ընդարձակ խարխուլ պարիսալ իր մի շարք բուրգերով՝ և քիչ յետոյ կմախքի դաժան հայաքրով, ոչ աւելի շուտ դիմակի սառած աշքերովը սկսեց երեսիս նայել, աւերակ եկեղեցու խաչից զուրկ ահագին գմբէթ...

Սրտիս մէջ դող ընկաւ, ինձ պատեց այս սրբազնն
երկիւղը, որ ապրում է ամեն չուխտաւոր, երբ երկար
ապաշխարանքից յետոյ, մօտենում է տաճարի բեմին:

Առաջիս Անին էր...

Այսուհետև ինձ կամաց-կամաց պատեց մի թափի՛՛,
Ճիշտ այնպէս՝ ինչպէս արևի մուտքից յետով, խաւարը
արագ, բայց առանց աչքի զարկելու՝ նւաճում է պայ-
ծառ երկինքը։ Այդպէս էլ մարեց հոգուս մէջ ուրախու-
ծառ կերպին շողքը և ինձ պաշարեց խաւարը... մի
համր վիշտ...

Ես մոռացայ ամեն ինչ, ուղեկցիս, նոյն իսկ ինձ,
որ այժմ (արդեօք աւերիակների ճնշող տեսքից) քայլում
էր լուս, գլխիկոր, կարծես մէկը յափշտակեց ինձ, սու-
զեց մտքի ոլորտների մէջ. Զգացի, որ ես սգաւոր եմ, և
անում եմ պատիս մօտիկ էակի շիրիմը ոզբալու...

Այդ միջոցին յանկարծ ականջիս դիպան ամեն կոմից

շների ուժգին հաջոց։ Եւ ուշքի եկայ. շրջակայ դէզերետակից դէպի մեղ էր արշաւում խոպոտ, պառաւ զամբռոների մի ահագին վոհմակ, որ այնքան կատաղում են, երբ մի օտարական համարձակում է ներս մտնել իրենց պաշտպանութեան ենթակայ գիւղը։ Մեղաւոր մեր հագուստն էր, որ դաւաճանեց մեր դէմ, Տեսնալով այդ գաղաններին, որոնք աւելի համարձակ ենքան թէ սառնամաներին որսի դուրս եկած գայլերը՝ ես սաստիկ վախեցայ, մանաւանդ, որ բացի բոռնցքից ձեռքիս չը կար ոչ մի զէնք. գայլին հանդիպող ոչխարի պէս, ես չը կարողացայ ոչ փախչել և ոչ էլ փնտոել ապահով տեղ։

Այն, ինչ որ կատարեց այդ միջոցին ուղեկիցըս, ես մինչեւ այսօր էլ չեմ կարող առանց ծիծաղի և առանց գովասանքի պատմել։

Զինւած իր կաղնու գաւազանով, ինչպէս միջնադարեան անվեհեր ասպետ՝ որ համարձակ դիմաւորում է ոսխին, որ ասպարէզ իջնելով երդւում է կամ յաղթել կամ ախոյեանի նժոյգի ոտքերի տակ փչել հոգին, նա յարձակուեց թշնամիների բանակի վրայ։

Ես մինչեւ հիմի էլ լաւ չեմ յիշում, արդեօք, ինչը փրկեց մեզ, ուղեկցիս մարտնչելու վճիռը, թէ «օրիորդի» ներկայութիւնը, որ մեղնից մի փոքր հեռու, պոչը կախ սպասում էր երևի կոռուի հետևանքին։—Յանկարծ շները մի ըսպէ կանգ առան, նայեցին դժբախտ «օրիորդին» և միասին ճիչ արձակելով, քամու արագութեամբ սլացան դէպի «օրիորդը»... որին մնում էր փրկութեան մի ելք—ապաւինել իր ոտքերին։

Խեղճ ուղեկցիս գլխին կարծես ջուր մաղեցին։ Այդպիսի խորամանկ նահանջ նա ամենակին չէր սպասում, ուստի, երբ գիւղի չորքոտանի պաշտպանները, կատարած իրանց պարտը, պարծանքով վերադառնում էին արշաւանքից՝ նա էլ չը կարողացաւ զսպել իր

թափը... Միթէ այդ խիթախ ասպետը կարող էր տանել, երբ նրա աչքի առաջ վիրաւորում են այն կնոջ, որի պաշտպանութեան պաշտօնը ինքն էր ստանձնելու... Զը սպասելով թշնամու գրոհին, երևակայելով իրան իր ազնիւ նժոյգի մէջքին, նա առաջ սլացաւ, և գաւազանի հաստ գլխով այնպէս խփեց առաջին պատահած շան, մէջքին, որ սա կականձելով փախաւ և պատրսպարուեց դէզերի տակին... Առաջին զինւորի այս խայտառակ պարտութիւնը ջուր մաղեց թշնամու ամբողջ բանակին, իսկ աւելի բորբոքեց խենթ ասպետիս յաղթական ոգին։ Մի զարկ էր և այդ կատաղի կենդանների ահագին վոհմակը առանց որևէ ոազմական կարգու կանոնի, փախուստի դիմեց... Հալածելով թշնամու վերջին զինւորին նա եկաւ և ընկաւ մօտակայ քարի վրայ և սկսեց հետ, ճիշտ այնպէս ինչպէս հռովմի կըրկէսում ժամերով մաքառած մարտիկ։

Մի կողմ կանգնած, և ներկայ լինելով շներ հալածող հերոսի բոլոր արկածներին ինձ բռնկել էր այնպիսի ծիծաղ, որից քեզէր մնում փորս փուչիկի պէս պայթէր... Ո՞վ կարող է պնդել, որ մեր ժամանակ էլ չեն ապրում ջաղացների հետ մաքառող խենթերը։

Եթէ այդ բոպէին ձեռքիս լինէր դափնի, ինչ կապէկած, որ զրանով կը պատկէի հերոսիս գլուխը... ափական որ բացի խաղողի փոքրիկ կողովից ձեռքիս ոչինչ չը կար։

Մատանք գիւղի ուղեկցիս վախեց ոչ մի շուն չէր վստահանում հաշելա իսկ եթէ ճանապարհին, կամ դէպի տակին պատրաստ էր որևէ դամփու, առաջինը խոհեմութեամբ փոխում էր, ուղին, իսկ միւսը երկիւղով հետևում վտանգաւոր օտարականներին։

Սաստիկ շոգ էր, վերկից կիզում էր արկը, թէն պուածոտ էր։ Այն համեղ ճաշը, որ կուշտ կերել էինք պանդոկում, ինչ ասել կուզի արդէն մարսուել էր. բացի

այդ. հարկաւոր էր մի փոքր հանգիստ պարզել իմ ուսներին, որ եթէ լեզու ունենային անշուշտ կը բողոքէին իրանց հարստահարողի դէմ:

— Պէտքէ մի համեստ նախաճաշիկ ուտել, դիմեց ինձ ուղեկիցս ճանապարհի կիսին կանգնելով—այնպէս քաղցած եմ, որ կարծես ներսից դանակով բերթում են աղիքներս:

— Ի հարկէ, պատասխանեցի ես, մանաւանդ այսպիսի փառահեղ արշաւանքից յետոյ: Ձեզ պէտքէ մատուցել Մաղրասի մի բաժակ ընտիր գինի:

— Մի բաժակ, կրկնեց նա իմ հարցը արհամարհանքով—ասա մի թունգի:

— Իսկ չէք յօգնել:

— Յօգնել, մէջքով քար եմ կրել, ի՞նչ է...

Քարից էր այդ մարդը. ամբողջ երկու ժամ ոտքով ճանապահ էր եկել, և ամենից առաջ ուտելու մասին էր մտածում:

— Դէ, շուտ ինձ համար կամ կերակուր, և կամ խանութ ճարիր, թէ չէ վրէժի մնացորդ քեզնից կը լուծծեմ: Խեղճ օրիորդ, ով կարող էր սպասել, որ քեզ այդպէս խայտառակ կերպով կընդունեն քո երկրպագուները:

— Այս ի՞նչ գիւղ է, այ տղայ, յանկարծնա դիմեց մի երիտասարդ գիւղացու, որ ուսին խուրջին, ձեռքին մահակ իջնում էր գիւղից:

— Խարկնվ, աղա, պատասխանեց երկիւղով գիւղացին, և սկսեց երկուսին ուտից գլուխ անդղել, և կասկածով նայել ուղեկցին բաճկոնի փայլուն կոճակներին:

— Ի՞նչպէս թէ Խարկով, ապուշ: Ձեզնից ո՞ր ապուշն է հայ գիւղին այդպիսի տիսմար անուն կպղըել:

Ուղեկցու կրկն, կատաղեց, հազիւ զսպելով իրանց յարձակում գործելու պատրաստ գայլի պէս նա դիրք էր մութ, կատաղի աչքերով նայում գիւղացու ուղիղ երեսին:

Խեղճ գուղացի, միթէ կարող էր ենթաղբել, որ իրանց գիւղի անունը կարող էր նրան մի օր փորձանքի մատնել: Վախսից կարկամած՝ նա ոչխարի ապուշ դէմքով նայում էր պատասխանին սպասող իր անակընկալ ոսուխին:

«Պէտք է միջամտել», ասացի ես, մտքիս մէջ, թէ չէ խելառ ծերունին խեղճ գիւղացու զիսին փորձանք կը բերի: Բայց ինչ ձևով դիմեմ, որ գիւղացու փոխարէն ես չը տուժեմ: Այսպիսի դէպքում աւելի շուտ գուրգուրում են, քան թէ յանդիմանում», պատասխանեցի ես ինձ, հետևելով Սանխօյի խոհեմ խելքին. «Դիմենք այս միջոցին»:

— Ախր սա ինչ մեղաւոր է, որ իր նախնիքը այս գիւղին այդպիսի օտար անուն են նւիրել: Միթէ ծնողների մեղքը որդիքն են քաւում: Այստեղ խանութ ունէք, հարցը ես գիւղացուն, վարպետորէն փոխելով խօսակցութեան նիւթը այնպէս, որպէզի խփեմ խօսակցիս թոյլ երակին:

— Ունինք աղա, էսպէս դիւղ կէրթաք, կը հասնիք Պետրոսի գիւղնին, պատասխանեց վերջապէս ուշք գալով գիւղացին, և գոհ, որ առանց փորձանքի ազանձեց իր ախոյանի ճանկերից, սկսեց վագելով իջնել զառիվայրից: Յետևելով գիւղացու ցուցումունքին՝ են առաջ ընկայ, որպէզի իմ օրինակսվ վարակեմ ուղեկցիս: Եօ սկսակ արագակի իջնում մէջ, վերջին անգամ չը հիասթափեցի սպասելիքիս մէջ. վերջին անգամ սպառնալով գիւղացուն՝ նա հետևեց օրինակիս:

Երբ մի քանի քայլ հեռացանք՝ ես յետ նայեցի. Նկատելով փախչող գիւղացուն, որ սարսափից դժգոյն վազում և շարունկ ուղեկցին էր նարում, ես արձակեցի բուռն բրգիջ:

Հասանք խանութին: Մեր անսպասելի մուտքը, մանաւանդ հագիս փայլում բաճկոնը և ուղեկցին ճակատի կակարդը, բոլորն վին շշմեցրին: միամիտ խանութ-

պանին... Նստած տեղից ոտքի ցատկելով, ճա, սպայի կամքին գերի զինւորի պէս՝ երկիւղով սպասում էր մեր հրամանին... Խեղճ մարդիկ, ինչպէս դողում են շըեղ արտաքինից, որի գալուստը, գատ երազի պէս, կապում են որևէ չարիքի հետ:

Երբ յայանեցինք, որ մենք ճամփորդ ենք, Անին տեսնելուց ուրիշ նպատակ չունենք, և եկել ենք մի փոքրիկ նախաճաշիկ ուտելու, կարծես խեղճի ոտքերից արձակեցին կապանքները, որ ով զիտի, իրան արդէն երևակայում էր կախաղանի տակին:

— Ես սհաթին, աղաներս, բացականչեց նա ուշրախացած, և ձեռք ու ոտքի ընկնելով, սկսեց կարմիր վարագոյրի յետեկ անցքով ներս ու դուրս սողալ. Այդ միջոցին էր, որ ականջիս զիտաւ. կանացի խուլ փսխոց և նկատեցի, որ մենք են արնալում խաւարի մէջ փայլող երկու աշբ:

Օգուտ քաղելով դէպըից, ես թողի ուղեկցիս իր կամքին, որ աղատ աղայ իր առջեկ առատ ուտելիքն ու օղին, դուրս եկայ, կանգնեցի խանութի շէմքում, սկսեցի դիտել զիւղը: Նա հին, նահապետական տեսքով մի զիւղ էր, նոյն Քսենոֆոնտի նկարագրած լարձիթները, հիւղերի յարդէ տանիքով և հողէ կտուրներով, ուր այնքան դարերի ընթացքում մուտք չէր գործել զարգացման հչ մի, գոնէ, արտաքին նշան:

Բայց կար մի զիծ, որ զորշ շրջապատի մէջ կարմիր գոյնի պէս աշքիս խփեց, փողոցներում տիրում էր օրինակելի մաքրութիւն, որոնք իրանց տեսքով յիշեցնում էին նորահարսի խնամքով աւլած բակերը.— Զը կային աղքի այն ահազին կոյտերը, որոնք անձրսից յետոյ տիրմ են դառնում և իրանց գարշելի բուրմունքով վարակում զիւղի այն օդը, որ տիրում է այդիներում, ամառային զով զիշերներին:

Սակայս այդ արժանիքը աւելի վերագրում ենք

զիւղի ստորոտում հոսող Ախուրեանին, քան թէ հայ զիւղացու մաքրասէր հակումներին, որոնցով նաշի կարող պարծենալ գերմանական գաղութի բնակիչների առաջ:

Դիմացիս մի զիւղացի իր զոյկ եղներով ցորէն էր կախում, մէկ ուրիշ գեղջուկ ցաքանով խոտ էր վերցնում դէզից և թափում սայլի մէջ, իսկ ինձնից ձախ, սրահի մէջ, հաւերին թեփ էր տալիս մերկ ուաքերով, հազին աքաղաղի փետուրների պէս խայտարդէտ շորեր, բարձր առողջ երիտասարդ մի կին: Դիտեցի նաև գիւղի շրջակայրը, նա գեղեցիկ էր, աչք զիւթող, սակայն այդ ահազին, արգաւանդ տափարակի վրայ. Ըլ նկատեցի ոչ մի հարևան զիւղ... նա ընկած էր բոլորովին մեկուսի, ինչպէս ծովի մէջ պատահնունքով զոյացած մի բերբի կղզի... ճշմարիտ որ Խարկով:

Սյապէս, դրսում չըտեսնելով առանձին հետաքրքիր պատկեր, ես կրկին ներս մտայ խանութ, ուր ներս էին եկել և պատի տակին նստոտել մի խումբ զիւղացիներ:

Նրանց մէջ, հէնց առաջին հայացքից աչքիս ընկաւ ու երկար բեխերով, խոշոր աշքերով, կտուցի պէս կեռ քթով մի յաղթանգամ զիւղացի, որը բաղցը զրոյց էր սկսել ուղեկցիս հետ:

Այդ միջոցին իմ մէջ ցանկութիւն ծագեց մասնակցել նրանց զրոյցին. Բայց երբ ականջիս զիտան օտար, կոկորդից բխող. Լեռնականի կոպիտ հնչիւներ՝ ես զարմացայ... սկսեցի ուշադրութեամբ հետել մէկ տարօրինակ ուղեկցիս, մէկ էլ զիւղացիներին:

Իսկ նա, ամենեին ուշք ըլ դարձնելով ինձ, ինչպէս իր կողքի ալիւրի տոպրակին, շարտնակում էր զրոյցը:

— Սրանք ինչ աղգից են, վերջապէս կամենալպվ լուծել այս գաղտնիքը, հարցըի գրամակղի առաջին պատկառանքով կանգնած խանութպանին, որ թարթելով իր եղակի աշքը հետևում էր նրանց խօսակղութեան:

— Քիւրդ ենք աղա, պատասխանեց թուխ հսկան, տեղական հայերէնի այնպիսի մաքուր բառբառով, որ ես ապշեցի. այնպիսի հպարտ տօնով, որով կարծես ուզում էր պարծենալ, որ պատկանում է այդպիսի խզախցեղի: Ո՞վ կարող էր ենթադրել, որ ես խօսում էի մեր վաղեմի ցեղական թշնամու հետ, որ ապրելով դրացի, բարձր, ազնիւ աշխատանքով ապրող ժողովրդի հետ նոյն իսկ արտաքինով փոխւել, ստացել էր շրջապատի խոր կնիքը:

— Հաշտ էր ապրում, ծածուկ հարցրի ես խանութպանին: Նա իր եղակի աչքով ու գլխով բացասեց:

— Սրանք իրանց աշխատանքով ապրող ժողովուրդ չեն ախր:

— Զէ, աղա, պատասխանեց խանութպանը ժպտալով յոռի կասկածներիս վրայ: — Սրանք էն քիւրդերից չեն... ի՞նչու պիտի թալանեն, փոքրուց մէւտեղ ապրող մարդիկ ենք, մէկտեղ կը ցանենք, կը վարենք:

Քիւրդ, թալանի, արշաւանքի սովոր, և աշխատանքք ես ապշեցի...

Արդեօք, այս միտթարիչ երեսյթնէր, թէ մի այլ զգացմունքի տակ էր, որ գրաստի պէս չարբաշ բայց միշտ էլ մերկ, այդ նոյն իսկ չքաւոր բաղաքացիներին մատչելի բարիթներին կարօտ մշակներին սկսեցի հիւրասիրել թէյով:

Մի ժամ յետոյ ամենքին հրաժեշտ տալով և խանութպանի ձեռքի մէջ սեղմելով արծաթի մի խոշոր դրամ, մենք դուրս եկանք: Գոհ մեր առատ վարձատրութիւնից՝ խանութպանը էլ չըսպասեց հրամանի. վազեց հարեւանի խրճիթը, սի րոպէ անց դուրս եկաւ մի ուրիշ գիւղացու հետ, որոնք երկուսիս պտուտակի գառիվերով առաջնորդեցին Ախուրեանի ափը: Այնտեղ

մեզ սպասում էր ծառի կոճղից կապած վերին աստիճանի տարօրինակ ձեի—տափակ խորքով, վերեկց լայն, ներքեկց նեղ՝ մի նաւակ:

— Համեցէք, աղա, դարձաւ նաւաստին ուղեկցիս, որ նաւակը մի ակնթարթում քակելով, սպասում էր մեր մուտքին:

Հակառակի պէս այստեղ էլ ուղեկցիս հետ պատահեց մի թիւրիմացութիւն, որ հարկ է ընթերցողին պատմել:

Իջնելիս արդէն նկատեցի, որ նա մի տեսակ խամնոյգի երկիւղով էր նայում, պղտոր, վարար գետին, իսկ այս անգամ երբ տեսաւ այլանդակ նաւակը՝ ուղակի խըտնեց:

— Ապուշ, յարձակուեց նա նաւաստու վրայ, սադագաղ է, թէ նաւակ:

Երեքով արձակեցինք ուժեղ բըքիչ:

— Կը վախենամս, աղա:

Այդ էր պակաս: Խեղճ գիւղացին ի՞նչ կը կարծէր, որ գործ ունի մի գօն-Քիշոտի հետ, և այդ անմեղ կատակով կարող էր վիրաւորել նրա ասպետական պատիւը:

Ապշած նաւաստու վրայ նա նետեց սպառնական հայեցք:

— Դագաղ ու պղտոր ջուր... չէ, սա փորձանը է գուշակում... չեմ, նստիլ, ասաց նա յամառ երեխայի վճռական ձայնով, որին խօսքով համոզես, թէ մտրակով միւնյոյն է, չի աղոիլ:

— Ես աւելի շուտ, ոտքով կանցնեմ... և հէնց այնէր, երբ ուղում էր կատարել իր այդ խենթ որոշումը, էլ մտածելով, որ կարող եմ զրդոել նրա զայրոյթը, ես առաջ վազեցի, բռնեցի թեից, և սկսեցի Սանխօյի պէս համոզել, որ նա դէն ձգի այդ վտանգաւոր միտքը:

— Ի՞նչ կայ որ, ինչից ես վախենում, հարցը եց նա զարմանքով, և այդ միջոցին գէմքիս չոեց իր խորշը աչքերը, որոնց մէջ փայլում էր երեխի այն անմեղ ժաղիտը, եթի նա չի հասկանում իր արարքի ամբողջ հետևանքը...

— Նրանից, որ հէրիք է ափից երկու քայլ հեռանաք, չէք դիմանալ գետի ուժեղ հոսանքին, վայր կընկնէք ու կը խեղդուէք:

— Լողալ գիտէք:

— Ո՞չ.

— Բայ ի՞նչպէս էք համարձակվում ոտքով անցնել այս վարար գետը:

— Սա, սա վտակ է ոչ թէ զետ: Մի տես յատակից քարի գլուխներ են երկում. ոտքով համարձակ կարելի է անցնել, քան այս թէ դագաղով, որ հէրիք է այս քարերից մէկին դիպչի, իսկոյն կարող է շուր գալ և մեզ տակով անել:

— Միայն թէ ոչ կօշիկներով, այլ բորիկ... ափսոս են կը թրջուեն, իսկ չորանալուց յետոյ պէտք է դէն ձգես...

Եւ նստելով կողքի տափակ քարի վրայ նախ հանեց աջ, իսկ յետոյ ձախ ոտքի կօշիկը:

Ես ուղակի տարակուսեցի: Բարկութիւնից սկսեցի կոծոտել շրթունքներս և մտքիս մէջ բողոքել բախտիս գէմ, որ ինձ կապեց այս խենթի հետ:

Արգելել անհնարին էր, դա աւելի կը բորբոքէր նրա քըմահաճոյըք. ինչ անել, խափանելու ինչ միջոց կար այդ խելագարի խիզախ միտքը: Մնում էր սովորական միջոցին դիմել, այն է, բերել փաստեր, որ համոզէին այդ գժին, թէ այդ արկածը մի անտեղի կատակ է, որ բացի փորձանքից, չի բերել ոչ մի արդիւնք... բայց իզուր, նրա վրայ չազգեց ոչ փաղաքշանք, ոչ աղերս:

Մեր վախը հակուակ պէս աւելի ոգնորեց... Շերկու

ոտքին մի կօշիկ հագած» նա պնդում էր:

— Զէ, ի՞նչ կուզես ասա, պէտք է անցնեմ.

— Ոտքով,

— Ատքով,

— Այս գետը,

— Այ, այ, հէնց այս գետը:

Գիւղացիք, որ այդ քան ժամանակ հեռւից սպասում էին գործի վախճանին, ներքուստ անշուշտ մեզ վրայ ծիծաղելով, բայց արտաքուստ չը վստահելով որևէ խօսք ասել, սիրտ առած, մօտեցան և սկսեցին հերթով խրատել «աղային», որ աւելի հեշտ է նաւակով, քան թէ ոտքով անցնելը:

— Անը գու չիդես, աղա, էս ի՞նչ խելառ ջուր է, էսոր խասիեթը մենք գիտենք, էսոր քու աչքով մի աշէ, խորքին դարուփոս շատ ունէ, տեղ կայ էրգու արշին է, տեղ կայ մէ թզի չափ էլ երես չունի: Հէրիք է ընդուր էդպէս մի ծիւղակի մէջ, քշէ կը տանի:

— Ես այդ խօսքերից վախեցող չեմ, ի՞նչ կուզէք ասէք, հէրիք է որ մի խօսք ասեմ, մէկ է, կախէն էլ պէտք է կատարեմ:

Եւ իր հուժկու թերով հալածելով մեզ գէս ու դէն, նա դուրս փախստ, և տօթին ջուր մտնող գոմէշի պէս, վազեց, արագ ճանապարհին մի բանի անդամ սայթարելով, մինչև սրունքները մտաւ ջուրը:

Մենք շարած մնացինք գետի ափին: Այդ միջոցին յանկարծ գլխիս մէջ ծագեց փայլուն միտք: Առաջ վազեցի և բռնելով նրա բաճկոնի փէշից, սկսեցի ուժով քաշել դէս ինձ:

— Սպասեցէք, հայրիկ, սպասեցէք, ձի կուզէք, ձի:

— Ձի, հուր է,

— Կը հեծնէք և այնպէս կանցնէք, հարեցի ես շոյելով նրա թոյլ երակը:

— Ապա, ով է տալիս: Դուրս գալով ափ՝ նա պա-

հանջեց, որ կատարեմ իմ խոստումը: Շթէ չէ քեզ էլ կըստիպեմ ինձ հետ ոտքով անցնես գետը», սպառնաց նա:

Ինչ կայ աւելի հեշտ՝ քան թէ զիւղիւմ ձի դժնել:

Իսկոյն նաւաստուն արծաթի զրամ ընծայելով, պատւիրեցի, որ գնայ մի այնպիսի ձի բերի, որ կարողանայ լողալ միւս ափիւ:

Քառորդ ժամ հազիւ սպասեցինք, երբ մէկ էլ տեսնես նաւաստին, հեծած ճիշտ որ նժոյգ, ճանապարհին փոշի տալով, զառիվայրից դէպի մէկ էր վազում:

Ուղեկցիս ուների տակ կարծես այրող հեղուկ քսեցին, էլ չը սանձելով իր հիացմունքը, նա առաջ սլացաւ, գրկեց ձիու վիզը և սկսեց շոյել կենդանու գունչը, ճակատը:

Որքան աշխատեցի, որպէս զի չը ձգեմ, այսպէս թէ այնպէս ուղեկցիս վարկը, բայց չը կարողացայ, արձակեցի ուժգին ծիծաղ, որին արձականք տուին կողքիս երկու գիւղացիք:

Ու մենք տեսանք, թէ ինչպէս նաւաստին իջաւ քոնեց ձիու սանձը, իսկ նա մի առանձին հպարտութեամբ, ասպանդակի մէջ աջի տեղ ձախ ոտքը դնելով թուաւ ձիու մէջըին՝ հակառակ կողմից, իր կամքով թէ նաւաստու ցուցմունքով: Նորից ուժեղ մի քըթիջ պայթեց: Նա գործեց ամօթալի սխալ, խայտառակելով զիւղացիների աչքում, թէ ինձ թէ իրան: Գլխիկոր նա իջաւ ձիուց, այս անգամ, խրոխտ ասպետի տեսքով՝ թուաւ ձիու գաւակին, և ամբողջ ուժով տյնպէս խթեց ձիու փորին, որ կենդանին ծառս եղաւ, մի քանի անգամ, պարեց յետեի ոտքեր վրայ, իսկ յետոյ քամու արագութեամբ չափ ընկաւ գետի ափին:

Սաստիկ վախեցանք, սրտի դողով սպասում էինք, (որովհետեւ նա ձիու մէջըին այնպէս էր թոչում, որ կարծես թէ նստած էր ոչ թէ թամբի, այլ զսպանակով վափուկ մահճակալի վրայ), որ կատաղի նժոյգ, զգալով

մէջըին իր պաշտօնի բոլովովին անարժան հեծեալին, կը թօթափի մէջըից անախորժ բեռը և այնքան քաշ կը տայց քարերի շեղի մէջ, մինչև որ նա մարմանից կը թողնի այլանդակ շաղախ:

Բայց նա կարողացաւ սանձել ձիուն. մենք ապահով շունչ քաշեցինք: Սակայն այդ միջոցին նա մեզ վրդովեց մի աւելի խենթ արկածով. նա ձիու գլուխ շուռ տւեց, սկսեց սաստիկ ձաղկել կենդանուն և ստիպել գետի այնպիսի վտանգաւոր տեղով անցնել, ուր նա ոլորտներ կազմելով էր հոսում: Հերիք էր որ նա ընկնէր այդ յորձանքի մէջ, մի քանի անգամ պայոյտ գործելով՝ ձիու հետ միասին կարող էր յատակը սուրգել:

Մենք ուղակի յուսահատւեցինք, վճռեցինք, որ այդ խելագարը ակներս կորստի է դիմում, ոչ միայն չարգելեցինք, այլ և համոզելու փորձ էլ չարինք ճանաչելով այդ յամառ մարդուն:

Սպասում էինք պատահական բարի հետեանքի... Սկզբում խոհեմ կենդանին դիմադրելու մի փորձ արաւ յիմար հեծեալի տիմար հաճոյըն... նա չէր վստահանում, կարծես պիտի անդուզի մի ափից միւս ափը ցատկել, բայց երբ նրա փափուկ կողերին զիպաւ մըտրակի մի քանի հարուած, դժբախտ կենդանին այնպէս աղեկտուր խրխնջաց, որով կարծես ուզեց ասել՝ թէ հակառակ իր կամքին են դրդում դիմելու այդպիսի փորձանքի... Փոնչաց, ուշիմ, դանդաղ ու գլխիկոր ոտք փոխելով մտաւ ջուրը:

Ահու դողով սկսեցինք հետեւել ձիուն, որ մահից ոտքերի ուժով պէտքէ փրկէր երկու կեանք... Սըկզբում վախով էր առաջ զնում, ճանապարհին նոյնիսկ մի անգամ էլ սայթաքեց, բայց երբ հասաւ գետի մէջ տեղին՝ նա սիրտ առաւ՝ և սկսեց աւելի համարձակ լուզակ: Զիու այս համարձակութիւնը խրախուսեց այս

ավին կանգնած և սրտի բարախումով իրան հետևող մարդկանց։ Բայց յանկարծ բոլորիս ցնցեց մի ուժեղ սարսափ, զարհուրելով տեսանք, թէ ինչպէս դժբախտ կենդանին չորս ոտքով ընկաւ ջրիտակի մի փոս, որի երեսին երեսում էր ձիռ, իսկ նրանից մի փոքր հեռու, մարդու գլուխ։

— Երկի տղմի մէջ է խրուել, յանկարծ զլիխու մէջ ծագեց այդ սոսկալի միտքը։ Մի յորձանք էլ՝ և ջուրը երկուսին էլ կը սուզի յատակը։

Խեղճ կենդանին շարունակ փոնչում էր, բժի ծաշ կերից դուրս թափելով ջրի կաթիլներ՝ և աղիողորմ խրխնջում... կարծես օդնութեան էր կանչում մեզ... Ես մի անգամ էլ համոզուեցի, թէ ինչքան խելօք, ազնիւ կենդանի է ձին... Ես չը կարողացայ զսպել արտասուքս։

Չունենալով օդնութեան ուրիշ միջոց, մենք ձիուն սկսեցինք այս ափից ամեն կերպ խրախուսել... կարծես նա հասկացաւ մեզ. սիրտ առնելով՝ նա սկսեց ամեն կերպ ձիգ թափել, ուսկան ընկած ձկան պէս՝ դուրս թռչել իր թակարդից... Եւ այստեղ մենք վկայ էինք, թէ ինչպէս ամեն մի շնչաւոր վերջին ճնաժամին՝ աշխատում է փախչել մահից... տեսանք հիացմունքով ու սարսափով, թէ ինչպէս դժբախտ կենդանին մի կողմից դիմադրում էր յորձանքի գրոհին՝ միւս կողմից ձգտում դէպի ափը... ձիգեր, որոնք կատարւում էին, մեզնից ծածուկ, ջրի տակին, բայց որոնք կարդում էինք նրա խոշոր, ու, սարսափից խելագար, գեղեցիկ աչքերում։

Մի վերջին ձիգ էլ՝ և նա կիսով չափ դուրս թռաւ իր թակարդից, աշխայժ լողալով՝ դուրս եկաւ եղերքը, կանգնեց, թափահարեց մարմինը, շուռ եկաւ և տեսնելով մեզ՝ ուրախ խրխնջաց... Ե՞ս, հիացայ, իսկ զարմանքից ուղակի բարացայ... ինչպէս խօսելու ձիրքից բոլորովին զուրկ չնրբուանին, հայացքով, ձայնով, ոտքերի պարով։

Հաղորդում էր իր ցնծութիւնը։ Այդ օրից, երբ առաջին անգամ նկատեցի կենդանիներից միայն ձիու մէջ մարդուն յատուկ այդպիսի բարձր շնորհք՝ ես սիրեցի այդ ազնիւ, իմ աստուն կենդանուն։

Յանկարծ այդ միջոցին աչքիս դիպաւ նրա մէջին նստողի կերպարանքը՝ սչինչ չեմ ասիլ, ընթերցող, խնդրում եմ մի րոպէ դուք երեայկէք... սակայն ներեցէք. քանի որ վկան ես եմ եղել, յուսով եմ աւելի հարազատ գոյներով ես կը նկարեմ այդ պատկերը... Նայեցի կրկին և ի՞նչ, նախկին գեր, կենադանի մարդու փոխարէն աչքիս ընկաւ ձիու գաւակին կարծես հին ձորձերից շինած մի խրտիլակ, որ յաճախ տնկում են այգու պտղատու ծառերի կողքին... Նրա կրունկներից, մանաւանդ վարտիկի միջից պղաոր ջնուր էր հոսում... կարծես մի հակայ այդ մարդուն իր ձիով յափշտակել կոխել էր ահազին տակառի մէջ և հանել... Ամբողջ մարմնով նա կծկուել էր ձիու թամբին, և կարծես գողալով ցրաից ուզում էր կրիայի պէտ սողալ իր պատեանի մէջ... Նա մրսում էր ինչպէս տաք սենեակից գիշերով սառնամանիքին արտաքսած մի քութ... թաց հագուստը սեփական կաշուի պէս կպել էր նրա մարմնին... Ուղակի խղճացինք այդ մարդուն. վախենալով, որ կարող է հիւանդանալ և դառնալ զլիխ մի նոր չարիք, շտապով նաւակ նստեցինք, և առանց փորձանքից անցանք միւս ափը, մօտ վազեցինք, և մեզնից երկու հոգուի երեխայի պէս գրկելով իջեցրինք ձիուց, ստիպեցինք հանել շորերը, մինչև որ թողինք համարեա Աղամի հագուստով, մէկ-մէկ բամելով փուեցինք քարափի կրծքին արեի տակ, իսկ իրան էլ պատուիրեցինք մողէսի պէտ այնքան տաքանայ, մինչև որ կը ցամաքի հագուստը, Եւ ի՞նչ զարմանք... Այդ փորձանքի տակ ասեմ, թէ նրա գլխից արդէն չքացել էր արագի շոգին, նա խելքի էր եկել, որից բոլորովին անտեղի տուժում էր։

Նրա մէջ արդէն հալւել էր նախկին յամառ հողին, այժմ զրաստի պէս հնագանդ՝ հպատակվում էր մեր կամքին... ոչ բողոքում և ոչ էլ տրտնջում էր մեր դէմ... Այս հանգամանքը աւելի էր զրգուում իմ ծի ծաղը և օգտուելով դէպքից ես կրկչում էի ամբողջ թռքերով.. Նայեցի դէմքին էլ սկսեցի քիչքիչ զսպել ինձ... Նրա գէմքին կարդացի ապաշխարող մեղաւորի անկեղծ զղջում:

Մի ժամ անցել էր արդէն, երբ բռնեցինք դիմացի փոքրիկ ուղին, որ սկսուում էր ժայոի ստորատից, ու երեխ վերջանում քաղաքի դռների մօտ: Բարձրանում էինք խիստ զգոյշ, համարեա մագլցելով, երբեմ իրար մէջքից գրկած, քարերի, աղիւսի, ծեփի անազին շեղջերի միջով, որ ամեն անգամ ոտք փոխելիս փուլ էր գալիս, և շառաջելով թափւում ներքեւ, ձորի մէջ, որտեղ լուս, կարծես սգալով դարեւոր մի վիշտ, հոսում է միշտ պըդառոր Ախուրեանը:

Դիմացիս բարձրանում էին կարծես երկաթէ հագուստով, գլխներին փայլուն սաղաւարթ, ծածկուած իրենց վիթխարի վահանի տակ և ախոյեանին գարդին սպասող ասպետների պէս, մի ժամանակ անառիկ, բայց ներկայիս կիսաւեր բուրգեր, որոնք մինչև անգամ այսօր էլ պատկառանք, են ներշնչում դիտողնեւ:

Մարդ ակամայից ապշում է հին մարդու եռանդի վերայ, թէ ինչպէս զուրկ մեր ժամանակի գոլորշու, ելեքտրական ուժերի աջակցութիւնից, երկու ձեռքով, ահազին աշխատանք վատնելով ստեղծել են այզպիսի փառահեղ բուրգեր:

Նայեւմ ես՝ մտածում, հիանում, յեայ պատկառում:

Մեր առաջ մեմն կողմից ձգվում էր գոտու պէս շրջապատող հընկայ պարիսպը, որ մի ժամանակ շքեղ

Անին պաշտպանում էր թշնամու ներս խուժելուց Նրանց թալանի վայրենի ախորժակից:

Տեղ-տեղ սկսուելով ուղիղ հիմքից, բարձրանալով մինչև պարսպից գագաթը, երեսում էին խոռչոներ կաղմանով՝ ահազին ճացեր: Ամեն անգամ ուժեղ քամի փընելիս, թւում էր, թէ նրանք դողում, տատանուում են հիմքից... մի ակնթարթ, և նրանք խորտակելու են շառաչելով, հետքից թողնելով, փոշու ամպեր, ու կը ժամանեաներին իրանց փատակների տակ թէ մեզ, նրանց ստուգուում սողացող թզուկներիս և թէ ներքեւ ձորի մէջ հոսող գետը:

Մի կերպ հասանք մուտքին, որ մի մեծ անցք էր: Եւ երբ ներքին վախով, առաջին անգամ կոխեցի հէնց մուտքին կից աւերակ եկեղեցու նսիրական փիտակները, ինձ պաշարեց մի ուժեղ տրտմութիւն, մի տեսակ վախ, երբ ապրում ենք գիշերով, խուլ, ամայի դաշտի մէջ, աւերակ մատուոի կողքից անց կենալիս: Յանկարծ ցնցեց ինձ մի վախ և մի դաղտնի ձայն ականջիս կանչեց, որ կոխելով այդ փատակների շիրիմը — եսպըզեցի այս... սրտիս մէջ ժագեց մի ուժեց փափագ, քաւել իմ մեղքը:

Սակայն առաջին անգամ ես զսպեցի ինձ... ինչու արդեօք զէմ էր համոզմունքներին... մեղանչում էր նոտիք հերքող լուսաւոր հոգուս:

Թէ այսունետեւ ինչ կատարուեց սրտիս խորքում, այդունեած զագացի, որ այսուեղ ծագեցին բռուն այդ չը գիտեմ... զգացի, որ այսուեղ ծագեցին բռուն այդ զագմունքներ, որոնք ուսութուն, փրփուր ալիքների պէս, զիազան լրջերին և լրջին յետ նահանջեցին, որ եկան, զիազան լրջերին և լրջին յետ նահանջեցին, որ պէսի միւս անգամ աւելի մեծ յորձանքով յարձակուեն խորտակելու իմ բանականութեան ամուր պարիսպը:

Այսուեղ յոյզերի փոթորկի էր բռնկել, որ սպառնաւմ էր հիմքից տապալել համոզմունքներիս հաստատուն կաղնիքը: Եւ ձեզ ասում եմ, երբ ձեր սրտում էլ

այդպէս արագ կը յաջորդեն զգացմունքի փոթորիկը, ալիք, ասլո նրանց զրոհին չի դիմանալ բանականութեան հչ մի ամրոց:

Եւ ես յագուրդ տալու, ինձ տանջող զղջումին՝ չոգեցի համբուրեցի վլատակներից մինը:

Այդ միջոցին էր, որ հակառակ իմ կամքի, դողդողացներքին շրթումքս և իմ աչքերից ընկաւ արցունքի առաջին զոյք կաթիլը:

Առաջ դիմեցինք: Մեր չորս կողմում ամեն ինչ աւերակ էր, դատարկ, ամայի... Տիրում էր նոյնիսկ ցերեկով սոսկում ներշնչող խաղաղութիւն... Չը կար կեանքի, յոյս ազգող, երկիւղ հալածող հչ մի հետք... Կարծես շրջում էինք լուսնի պէս մի լուռ, մեռած մոլորակի երեսին: Եւ քանի, առաջ էինք դիմում, նոյնքան էլ աճում, զարգանում էր մեր ներթին սարսափը... և դառնալով մի սկ կօշմար մետաղի ծանրութեամբ պառկում էր կրծիս և խեղդում դիմացիս այն տխուր, աւերակ մատուռի պէս խաւար հոգիս:

Միմիայն մացառների մէջ ձպուռն էր, որ իր յատուկ, տաղտկալի ձայնով սղոցում էր չորացած խորերի դեղին ծղօտները:

Այս աղմուկնէր, որ մեզ յոյս, աւետիք էր տալիս, թէ մենակ մենք չենք, որ ապրում ենք այս վլատակների, «շիրիմների ամայի կղզում»:

Թափառում էինք այստեղ, մեռելների ամայի կղզում, ուր ամեն կողմից զիմիս, կողքերիս, վատում, սաւառնում էին բուքի ոռնոցով լացող ոգիների... որոնցից ամեն ոքերգում էր ականջիս իր բողոքը ճճակատագիրը անունով մեծ դահճի ոճիրների դէմ...:

Ի ամ թէ այն դժբախտ ոգին եմ, որին դատապարտելով միշտ թափառելու տանջանքին, աքսորել են այս գերեզմանների կղզին, ուր ամեն ուղար փոխեիս կոխում էի թարմ, կրծին դեռ կնդրուկի ծուխ արձա-

կող շիրիմներ, որոնց պսակների ծաղիկները դեռ չեն թառամել, թափառում, և քամու հառաջանքների հետ սգում այս մենաւոր շիրիմները:

Երբեմն ինձ տեսնում էի պայցարի այն զարուրելի գաշտում, երբ մի օր առաջ իրար զիշատող մարդկանցից արիւնի կարմիր գետ էր հոսում, և որ այժմ պաղել, գետնին էր կպել, ուր ամեն անգամ ոտք փոխելիս կոխում եմ մի փափուկ տիղմ... Ես ցնցվում եմ, սարսափում ոսկոռներիս մէջ սառսուր է սողում և ճակատին պատում մասու ցուրտ քրտիսք...

Թափառում էի շիրիմների մէջ, ուր հեղեղից յետոյ, ամեն քայլ զործելիս ծագում է այն խուլ դըղոդիւնը, որ լսում ենք հեռու, սարերի քամակին երկինք որոտալիս, ուր յանկարծ ոտքերիդ տակին քարի, ծեփի շաղի զագաղների խուփը, քացանով խաւար, խորունք մի խորշ, որից սարսափով յետ ես փախչում:

Ահա դիմացիդ մի աւերակ մատուռ, որ բաց թքանով, սպասածի սարսափը չսած աշքերով քեզ է նայում, ամեն կողմից քեզ կանչում, որ գաս լսեն նրա անկումի զարհուրելի վէպը:

Սրտիդ խուլ երկիւղով աշխատում ես փախչել նրա կողքից, փակել աշք, փակել ականջ, որ չը տեսնեն նրա այլանդուկ անսըրը, չը լսեն նրա վայնասունը, որ հողմի պէս շարունակ լալիս է ականջիդ ափին:

Բայց այդ միջոցին մի ուժեղ փափաք քեզ յետ է կանչում, ուժեղ սր ձեռք քեզ յետ է քաջում, չես կարողանում զապել քեզ, շուր ես գալիք և սարմափը հաղուկնդանի ներս նախում. դա հին մատուռ է, մի փլատակ գերեզման, որի շեղի տակից կարծեն երեսը է նայում, նեխուող դիակի քարշուի հայացը:

Եւ ահա քո ջուրջ, օտերեների պէս, վիստնեմ են աներեն ոգիներ, որոնց թների աղմուկն է, որ պիտ-

չում է ականջիդ, թևերի քամին, խաղում երեսիդ...
Նրանք, որ այժմ խումբ կազմած, լուռ խորհուրդ
են տեսնում մի ինչ որ գաղտնիք:

Դողով տեսնում ես, թէ ինչպէս մի շարք ձեռքեր,
խլուրդի պէս, փորում են հողի կոյար...

Սարսափով սպասում ես՝ հետևանքին... Մի բողէ
և ահա բացւող փոսի մէջ տեսնում ես մի սկ, չոր մար-
մակն... Առաջիդ դագաղ է մի հին, ահագին դագաղ,
որի խուփը յանկարծ յափշտակում են մի քանի ձեռք
այդ միջոցին է, որ երեսիդ է դիպչում բաղանիքի գո-
լոցը պէս, մի սոսկալի բուրմունք:

Այստեղ, դագաղի խորըում պառկած է այլանդակ
դիակ, որի աշքերի, քերանի միջով ներս ու դուրս են
սոյում նողկալի իժեր:

Մի խենթ թոփչը գործելով դներս ես փախչում
տանջանքի խորանից... և այդ միջոցին, մատուի-
ներսից, ուղիդ ականջիդ տակ պայթում է մի ռւժեր
քըքիջ:

Ահա մի տեղ, ձեռքով կարծես պինդ սեղմած իր
կողքի խորունկ վէրըը, մագաղաթի պէս դժգոյն, երե-
սին տանջանքի կսկիծ, ինչպէս պատերազմի դաշտում
վիրաւոր, հոգեարք ասպետ, ընկած է ժամանակին փա-
ռահեղ քայց այժմ մի աւերակ աշտարակ:

Ինչ այստեղ, գըանից թիչ հեռու, գլխից գուրե-
զառամեալ ճճնաւորի դիակի պէս, որի սպանել են
հէնց ծնկաչող ազօթելիս կանգնած է գմբէթից թոլ-
ուվին դուրկ խարխուլ եկեղեցի... Նա, որ եր տեսքով
արգեն կենդանի բողոքէ երկրիս երեսին տիրող կար-
գերի, ու վերևի ամեն ինչ տեսնող, ամեն ինչ լսող
ահեղողատաւորի դէմ:

Իսկ այստեղու բոլորավին մէկուսի միւս դիակնե-
րիս քարի հողի թուման մէջ, ինչպէս մի հոգեարք
պինոր, երեսին սպած տանջանքի կսկիծ աշքերում

քարացած սարսափ, կտպոյտ, կիոախում զբթունքներին
աղեկտուր ճիչ, կրծքին կիսով չափ խրած մի սուր,
ընկած է հոյակապ մի աւեր շէնք:

Եւ այդպէս ամեն կողմից քեզ դիմաւորում են հին
շէնքերի զարհուրելի կմաղքներ:

Կարծես թափառում ես՝ ահեղ պայքարից յետոյ
պատերազմի դաշտում, ուր ամեն կողմից քեզ են նայ-
ում, դէմքին սարսափի կնիք, մարթած ոչխարների
տեսքով անթիւ դիակներ: Ժամ տո ժամ քեզ սկսում
է ձնշել մի ծանր տանջանք, ուղում ես փախչել այդ
խարխուլ շիրիմներից, որոնց միջից կարծես թօթափե-
լով իրանց կրծքի հողը, ոտքի են կանգնում կիսամերկ
դիակներ և ծիծաղ արձակում քո յետմից:

Եւ շրջակայ այդ փլատակների մէջ է, մահւան այդ
համբ անապատումն է, որ սկսում ես որոնել կեանքի
որիէ հետք, որպէս զի թօթափես խելազարի այն զա-
ռանցանքը, որ սպանում է և միտք և' հոգի:

* * *

Այդ միջոցին էր, որ հեռուից նկատեցի մի փոքրիկ
տնակ, որի շեմքին, միջին տարիքի ալեխառն մազերով
մի արեղայ, ձեռքի ափը հովանի տալով ճակատին դի-
տում էր նորեկ հիւրերին:

Մօտենալով մեր հիւրնկալի մենք բարեեցինք:

Աքեղան սիրով ընդունեց մեր բարնի, կարծես նա
վազուց էր սպասում մեզ, յետոյ ընդարձակ միջանցքով
առաջնորդեց դէպի հիւրերի սենեակը:

— Բնացի ձեզանից այս տեղ մի քանի հիւր էլ ու-
նենք, ասաց նա բացելով սենեակի դուռը:

Ներս մտանք: Դա ընդարձակ մի քառակուսի,
լուսաւոր սենեակ էր, մէջտեղ ճաշի մնձ սեղանով:
Նրա երկու կողմում նստած էին արտաքինից դատելով
կովկասի զանազան քաղաքներից եկած, տարբեր դասաւ-
կարգի պատկանող մարդիկ:

Ներս մտնելիս միանգամից մի քանի տասնեակ գէմբեր սկսեցին. մեզ ոտից գլուխ չափել, և չքացաւ այն աղմուկը, որ մի բոպէ առաջ տիրում էր սենեակում:

Հիւրերի, այդ մեծ մասամբ հաստ, կարճ հասակով, գէմբի կոպիտ և խոշոր գծերով մարդկանց մէջ էր, որ ին ձ գրաւեց գունաթափ, ոսկէ ակնոցով, նուրբ գէմբով, նիհար, բայց մի ժիր երիտասարդ,

Ես նստեցի հէնց այդ երիտասարդի կողքին. Մենք ժանօթացանք:

— Ներեցէք, ինչպէս ասացիք ձեր ազգը:

Նա կատարեց իմ խնդիրը:

— Նկարիչ:

— Այն, պատասխանեց նա իրեն յատուկ աշխոյժ տոնով, կարծես ներբուստ գո՞ իր այդ կոչումով:

Ես յիշեցի, որ միջանցքով անցնելիս, նկատել եմ սև շրջանակների մէջ, ներկայ աւերակ բայց նախկին փառահեղ. մի շարքի եկեղեցների տեսքը, որ կազմել էր մի քանի բնեկորներից մի հմուտ վրձին...

Յիշեցի և սկսեցի տածել այդ իմ երիտասարդ խօսակցին. և սէր և յարգանք, որի աճմանը մանաւանդ նպաստում էր ձեր ամեն հարցերին սիրով պատասխան տալու պատրաստ եղանակը:

Օգուտ բաղելով գէպեից, ամեն մի հարց, որ ծագել էր իմ մէջ Անին դիտելիս, սկսեցի հերթով առաջարկել մտերիմ խօսակցիս, որոնց նա սիրով պատասխան ում էր, հիմուելով հետազոտողների կարծիքի և պեղումների արդիւնքի վրայ:

Ուղեկիցս, որ նստել էր նկարչի ձախ կողքին, չէր խօսում, այլ մի առանձին պատկառանքով շարունակ լսում էր նկարչին:

Ինչի՞ս մերագբեկ, արգեօք, նրան, որ օղու շոգին արդէն վաղուց ցամաքել էր նրա գանգից. թէ գետը

ոտքով անցնելու վորձը նրան բոլորովին խելքի էր բերել:

Զեմ կարող ասել... Բայց թէ ճանապարհին և թէ այստեղ նա իրան բաւական լուրջ էր պահում:

Իսկ ես, որ ճանաչել էի նրա հոգին, նայելով նրա լուրջ դէմքին՝ հազիւ էի կարողանում զսպել ծիծաղս:

Երբ նայեցի նրա դէմքին, գուշակեցի, որ նա միցաւ ունէր, որ չէր համարձակվում օտար մարդկանց առաջ խոստովանել:

Նա քաղցած էր... և այդ դժւար չէր գուշակել նրա աչքերից, ուր բռնկում էր ագահ փայլ, երբ արեղան ամեն անգամ դուրս էր գալիս դիմացի խցից:

Եւ ինչքան բուռն էր նրա հրճուանը, երբ արեղան, կատարելով նրա իղձը, քիչ յետոյ դրեց երկուսին առաջ սև հացի երկու մեծ կտոր, թարմ մածունով երկու խոշոր պնակ, իրանց մի զոյկ փայտի գդալով:

— Իսկ զո՞ւք, դարձաւ աբեղան նկարչին:

— Կուզեմ, հայ-սուրբ, կուզեմ, հիանալի մածուն է, ուղակի գայթակղեցնում է... Բայց ոչ այդպիսի մեծ պնակով, և սկսեց քրքջալ ինչպէս շարունակ իրեն և ուրիշներին հեգնող աշխոյժ պատանի: Արդեօք, պարոնին հրապարեց վայրենի մարդու այդ հասարակ կերակուրը, թէ նա ուղակի կամեցաւ խուսափել ուտովներին դիտելու շատ միավուկ վիճակից... մաշը բայց թորոտին չը խափանեց մեր զրոյցը, ընդհակառակը, նա ընդունեց աւելի հետաքրքիր ընթացք, շօշափելով յարկելի պուփեսորի, կենցաղը: Սակայն ես չէի գաղարում, գողունի որկալ ուղեկցիս: արարքը նա մոռացման մատնելով մեր զրոյցը, որին քիչ առաջ վսրմ էր այն պիսի յափշտակութեամբ, այժմ զբաղւած էր աւելի լուրջ գործով, շարունակ պապիցն շարքի կարիչները խրում էր հացի փափուկ կողերի մէջ ազում, որից յետոյ բացւում էր օձի խորոշի պէս մոռի բերանին դոր:

այդմիջոցին ներս էր սողում գդալը, մինչև կոթը որ, տեղից մի ակնթարթ անց՝ կատարած իր պաշտօնը, կարմիր փայլով նորից իջնում էր ամանի մէջ:

— Էր հաճէք, մի պնակ էլ, հարցրեց աբեղան ժպտալով, բայց ներքուստ զսպելով իր զարմանքը, որովհետեւ, հազիւ հինգ ըոպէ անց նրա առաջ լնկած էր, կարծես ողբարով իր վիճակը՝ դատարկ պնակը:

— Զի մերժել, հայր-սուրբ, բերէք ուղեկցիս փոխարէն պատասխանեց նկարիչը, որ գդալի քթով, հազիւ էր ճաշակում առջեկ կերակուրը:

Իմ հարցիս, թէ ուր է պրոֆեսորը,

— Մօտակայ ձորում պեղումներ է կատարում, պատասխանեց արեղան:

— Եր, հաւատաք պարոն, շարունակեց նա պատկառ ունքով, կարծես մեսապղից է այդ մարդը, յոգնելու մասին ամեննին գաղափար չունի: Զարթնում է շատ կանուխ, արկի ծագումից էլ առաջ, և իսկոյն դիմում գործի: Իր մշակների հետ հաւասար աշխատում, նոյն իսկ իր եռանդով ոգերրում. ուղակի ապշել ենք, տիտանելով այդ մարդը մէջ այդքան կորով:

— Երբ է տուն գալիս:

— Ժամի երեքին-կարծես այն ելդագոր, որ հաճ գստի համար էլ սախառուած է. ժանանակ վատնելու, ճաշում է. շատ համեստ, իսկ յետոյ նշանակում պեղումների արդինքը:

— Իսկ որտեղ է ընդունում հիւրերին,

— Բանգարանդում: Ժամի ուղիղ հինգին: Այս, հիմի սպառում է հիւրին, աւարտեց իր խօսքը աբեղան նայելով: Ժամանացոյցին:

— Եւ առ անց ժամանակ վատնելու վեր կացանք, նկարչին ու արեդային երաժեշտ տալով, մենք գուրս եկանք և զիմեցինք դէմի թանգարան: Դա մի հին, կիսովին:

թէն աւեր, բայց գեռ ամուր մզկիթ էր, որ գտնվում էր աբեղայի բնակարանից քիչ հեռու:

Ինչից էր, արդեօք, նրանից, որ երկար փափազելուց յեաոյ, կատարվում էր իմ վաղեմի ուխտը, միքուսն յուզմունք ճանապարհին սկսեց ալեկոծել ինձ... Սիրտս այնպէս արագ բարախում էր, որ ուղակի արգելում էր ազատ շունչ քաշել... կարծես մէկը ներսից շարունակ փոքրիկ մուրճով խփում էր կրծքին վանդակին:

Աչքիս առաջ էր արդէն հոչակաւոր գիտնականը իր աշխատանքի ամբողջ արդիւնքով, նա, որ թօթափելով շիրիմների մոխիրը, յափշտակում էր նրանց ծոցից, մի հին ժողովրդի անցեալ փառքի ողբալի կրմալը, և հանճարեղ քանդակողի քերիչով պարզեցում նրան իր նախկին հոյակապ տեսքը:

Մօտեցանք մուտքին, որ ունէր փայտէ հին ձեին եղակի մի գուռ՝ երկաթէ փոքրիկ նիզով:

Մենք թակեցինք դուռը:

Մի ակնթարթ հազիւ անց մեր ականջին դիպաւմի խուլ, ախորժելի ձայն, որ երկի, պատկանում էր հոգով հանգիստ մի երջանիկ մարդու:

Խորին երկիւղով, ինչպէս տաճարի շեմքին մօտեցող հեթանուս, եթ բաց արի գուռը... երեսիս զիպաւ, միւ պաղ, ախորժելի քամի:

Ակսեցինք, ուշիմ իջնել բարէ սանդուխով դրսից փոքր բայց ներսից բաւական ընդարձակ մի տուն:

Մութն էր:

Սուածին հայացքով ես չը կարողացայ շրջակայ առարկաների մէջ ոչինչ ջոկել իրանց որոշ տեսքով:

Բայց երբ լնառելացանք խաւարին առաջին անգամ կիմացի փոքրիկ վանդակից ներս խուժող լոյնի տակեցիւն կատեցի մի երիտասարդ մարդու բարձր, հաղարտ,

Կարծես իր արժանիքը ճանաչող, բայց անշուք կեղմի
տակ մի համակրելի կերպարանք:

Ես մի վայրկեան, աշխատելով չը մատնել իս
յուղմունքը նրա թափանցիկ հայացքի տակ, նայեցի նրա
արտաքինին և ապշեցի:

Առաջիս նա էր, գիտութեան այն հոչակաւոր
քուրմը, որ փակուած էր խորանում՝ կարծես ճգնում
էր, երկրպագում իր կուռքին, ընդունում մեզ հասա-
րակ մահկանացուներիս անմատչելի պատզամներ... յե-
տոյ դուրս գալիս բեմ՝ թարգմանում մեզ, գաւթում
տենդով սպասող ամբոխին:

Այսօր նա շրջում էր փառքի այս փլատակների
անապատում, նայում իր սուր հայացքով նրանց
կմաղքներին, տեսնում բոլորին՝ իրենց նախկին տեսքով,
և յետոյ դուրս կորզում նրանց կործանման այն գաղ-
տնիքը, որին այնպիսի խնամքով նրանք թաղել են իրանց
փլատակների տակ:

Ես չը տեսայ նրա ուսերին շքեղ ծիրանի, գլխին՝
թագ, երեսին՝ փառահեղ մօրուք, որոնցով մի ժամա-
նակ այդ պաշտօնի մարդիկ սիրում էին պատկառանք
ազգել խաւար ամբոխին:

Ես տեսայ մի ուրիշ՝ մտքիս ստեղծածին բոլորովին
հակառակ պատկեր... և ես բոլորովին ապշեցի:

Այգպիսի հասակ, և այդքան արագ այդպիսի փառք:
Գլխին ծղօտից մի հասարակ, երկու կողմից հով-
անի տող գլխարկ, հագին կարճ բաճկոն, ոտներին
երկար կօշիկ, իսկ աջ ձեւքին մի մեծ, համարեա տի-
րոջ հասակին, արծաթէ կոթով բառակուսի գաւազան,
որ մի առանձին խորհորդ է տալիս այդ մարդու կեր-
պարանքին՝ ահա այդ մարդու արտաքինը...

Ո՞վ կարող էր կարծել, թէ այդպիսի անպաճոյճ
հագուստի տակ թագնուած էր մտքի այնպիսի կորով:

Եւ քիչ յետոյ ականքիս դիպաւ, լսելիք շոյող,

ամառային լուսնկայ գիշերով հէքեաթ պատմող դէվ-
րիչ մի ձայն... մի ձայն, որ յատուկ է շարունակ
իր մտքերի հետ խօսող լուրջ մարդկանց:

— Տեսնում էք այս քարը, իր արաբերէն փորագիր
տառերով, գտել ենք անցեալ ամառ, մի հին շէնք
պեղելիս:

Եւ ինչպէս մի հզօր, իր ուժը ամբոխին ցոյց տալ
կամեցող կախարդ՝ անշունչ քա ըին լեզու, հոգի տալու
մտքով, նա գաւազանով թեթև զարկեց քարին, և մի
ակնթարթ կարծես գաղտնիք պարունակող հայացքով
նայեց առջև ընկած քարին:

Եւ ահա, կարծես գերի իր կախարդ տիրոջ կամ-
քին՝ քարը, հոգի առնելով սթափւում է դարաւոր մա-
հից, թարթում իր յոգնած աչքերը, և առանց նայելու
մեզ հեռու կարկաչիւնի այնպիսի խուլ, այնպիսի
հոգի փոթորկող արձագանքով, պատմում իր կործանման
սոսկալի վէպը:

Որ ինքը մի ժամանակ Աանին նւաճող արաբ աշ-
խարհակալի վիթխարի կոթող, յաղթանակով քաղաքին
իշխող, յայտնի հրապարակում՝ այսօր մի տիուր բեկոր՝
ժամանակին թաղւած իր փլատակների կոյտի տակ...

Թիֆլիս 1905 թ. Յուլիս:



մեր բանարա Աստված յացեաք ասթուազ միւսան
շամանու և բանար ու շաման մե առանձ մի հա-
յուսական նույնառու առ մասն ու պատրա-
պատրա ամրացու ու պատ ու ու նաման ։ —
Տաք ու մե առանձ յացեաք առ մարդուն
յան ու ասխատա շաման ու քոք մի ամրացու ։ —
Ենան ու ու ասխատա մի ու քոք մի ամրացու ։ —
Մի ա այսաց յացու Ամա խամարտաք ու մաս
յարաւաք յախաւաք պատրա ամրացու Այս կամ
հար Այս յամայա ու խր ամրացու առ ա
ման բանար և առանձ նախան ման պատրա այս
ասխատա ու պատրա ամրացու ու ամրացու պա-
տրա ։ Ենա յախաւաք ամրացու ամրացու
ամրացու ու առանձ յախաւաք պատրա ամրացու ։
Ենա ա ասխատա պատրա ամրացու ։



24358

Որոնում եմ հրատարակող իմ այս երկերին։

- 1) Առաջին տանջանը,
- 2) Մի անգամ, այն էլ աշումքին,
- 3) Հին ցեղորդ,
- 4) Ռուանդաներ,
- 5) Ռուանդի օրագիրը,

Փոքրերի համար՝

- 6) Մի դեպք իմ՝ կեանքից,
- 7) Տանջանքով

